

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՕԱԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԱԻ-ՏԱԿ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայոց ազգածաղման (էթնոգենեզի) վերաբերյալ նշանակալի ինֆորմացիա են պարունակում խորենացու և Սեբեոսի Անանունի մոտ սլաճպանված ազգածին (էթնոգոնիկ) ավանդույթյունները: Այդօրինակ ավանդույթյուններն ամենուրեք առասպելականացած են և հաճախ կապվում են աստվածների, կիսաստվածների, առասպելական անվանադիր նախնիների (էպոնիմների) ու տոտեմների հետ: Ազգածագման ավանդույթյուններն իրականում վերաբերում են որևէ լեզվով խոսող հանրություններին, այսինքն՝ լեզվածագմանը (գլոտտոգենեզ), իսկ ժողովրդի ծագումն ու ձևավորումն ազգաբանական-ազգադրական (էթնոլոգիական) սլոցեսներ են: Ըստ այդմ, ազգածին ավանդույթյունները պետք է գիտվեն, նախ և առաջ, առասպելաբանական, լեզվաբանական և ազգաբանական դիտանկյուններից: Հետո միայն կարելի է փորձել մոտենալ այն սլատմական կորիզին, որ պարունակում են դրանք:

1. Առասպելաստեղծ մտածողության մեջ ամեն մի արարում կրկնում է նախնական տիեզերածին գործողությունը՝ ժամանակի սկզբում տեզի ունեցած աշխարհի արարումը<sup>1</sup>: Հաջորդ բոլոր առասպելական և իրական երևույթները կրկնում են իրենց համար որպես սրբազան նախադեպ ծառայող արարչագործությունը և դրա արդյունքում ստեղծված երևույթները: Արարումը հաճախ ներկայացվում է որպես մեծ աստծու հաղթանակ քառասյին ուժերը խորհրդանշող հրեշի կամ համադրելի մի կերսլարի դեմ (առաջին գոհաբերություն), որի մարմնի մասերից էլ ստեղծվում է տիեզերքի կառույցը: Մարդածնությունը և ազգածնությունը սերտորեն կապված են տիեզերածնության հետ՝ դրանք տիեզերածնության մասնավոր դրսևորումներն են (մարդն իրենից ներկայացնում է միկրոկոսմոսը, իսկ հասարակությունը՝ մեզոկոսմոսը: առասպելներում հաճախ հասարակության դասերը ևս ստեղծվում են առաջին գոհի մարմնի մասերից)<sup>2</sup>: Հայոց մեջ ոչ միայն հայ ժողովրդի, այլև տիեզերքի և ժամանակի ծագումը պետք է որ կապվեին նախահայր Հայկի և առաջին հայկյանների հետ, որոնց ավանդույթյունները ակնհայտ տիեզերածին տարրեր են պարունակում (Հայաստանն ինքը, նրա լեռները, գետերը, նահանգները, ապա և ամիսներն ու ժամերը կոչվել են նրանց անուններով, այսինքն համարվել են սկիզբ առած նրանցից):

<sup>1</sup> M. E l i a d e. Cosmos and History. The Myth of the Eternal Return. New York, 1959, p. 18.

<sup>2</sup> Տե՛ս օրինակ B. L i n c o l n. Myth, Cosmos, and Society. Cambridge (Massachusetts). London, 1986, p. 141 ff.:

Հնդեվրոպական ավանդույթներում մեծ տեղ են զբաղեցնում ամպրոպային առասպելները, որոնց համաձայն, ամպրոպի աստվածը հաղթում է իր հակառակորդին՝ օձ-վիշապին, կամ հակառակորդին փոխարինած և նրա հատկանիշները կրող իր իսկ կնոջը կամ որդուն: Այդ հաղթանակից հետո հայտնվում է ջուրը (անձրև է դալիս, գետեր են սկիզբ առնում): Այս առասպելների նախատիպը, իր կարևորությունը պատճառով, կոչվել է «հիմնական առասպել»: Այն ակնհայտ տիեզերածին առասպել է, որի ընթացքում սպանվում է առաջնագոհ կերպարը և ձևավորվում աշխարհը: Ըստ այդմ, ամեն մի պայքար ու արարչագործություն, այդ թվում և ժողովրդի ծագում-արարումը կարող է ընկալվել որպես ամպրոպի աստծու կոպի և նրա հակառակորդի մարմնից նոր աշխարհի ձևավորման կրկնություն<sup>3</sup>:

Սա՝ տիեզերաբանական (այստեղ՝ առասպելաբանական) տեսանկյունից. հասարակագիտական (այստեղ՝ ազգագրական) տեսանկյունից՝ այս առասպելները և սրանց հերոսների հարաբերությունները մարդկային հասարակության հարաբերությունների երկնային արտացոլումներ են: Այս համատեքստում ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես ռազմական սկզբունքի կրող, երկրային ռազմիկների երկնային մարմնավորում և առաջնորդ (ըստ Ժ. Դյունեգիլի տերմինաբանության՝ երկրորդ ֆունկցիայի աստված): Հնդեվրոպական հասարակություններում էական դեր են կատարել սովորաբար դերմանական Männerbund տերմինով կոչվող, իրենց աստծու և իրար հետ երդումով կապված պատանի որսորդ-ռազմիկների ծիսական հրոսակախմբերը: Սրանց առասպելաբանական արտացոլումներն են, օրինակ, հնդկական Թուդրայի և Ինգրայի հետևորդ ռուդրաները և մարուտները, սկանդինավյան Օդինի անդրաշխարհիկ գործը՝ էյնհերիները, իռլանդական Ֆիննի որսորդ-ռազմիկների խումբը՝ Ֆիանան և այլն<sup>4</sup>:

Männerbund-ի աստվածը, տարբեր ավանդույթներում և տարբեր իրադրություններում, կարող է համադրվել, նույնիսկ նույնացվել ամպրոպի աստծուն, կամ՝ ընդհակառակը, հակադրվել նրան: Ամպրոպի աստվածը հաճախ հանդես է գալիս որպես գերագույն աստված (հին հնդկական, հունական, լատինական, սլավոնական, բալթիկ դիցարաններ). այլ դեպքերում

<sup>3</sup> Հնդեվրոպական «հիմնական առասպելի» վերաբերյալ տե՛ս հատկապես В. В. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974. Մարդու և ժողովրդի ծագման ու նոր երկրների հիմնման վերաբերյալ ամպրոպային առասպելի համատեքստում՝ G. N a g y. Greek Mythology and Poetics. Ithaca, London, 1990, p 181-201. И. М. Дьяконов. Арханческие мифы Востока и Запада. М., 1990, էջ 98:

<sup>4</sup> Հնդեվրոպական Männerbund-ին հիմնարար աշխատություններ են նվիրել Օ. Հյոֆելերը, Ս. Վիկանդերը, Գ. Վիդենդերենը, Ք. ՄքՔոնը և այլք, սրանք, ցավոք, չկան Հայաստանի դրադարաններում: Վերջին կարևոր աշխատությունն է՝ K. K e r s h a w. The One-eyed God: Odin and (Indo-) Germanic Mannerbünde.— "Journal of Indo-European Studies Monograph", № 36, Washington D.C. 2001. Männerbund-ի աստվածներ են համարվում, օրինակ, գերմ. Վոդանը (իսլանդ. Օդին), հնդ. Թուդրան (որի հինդուիստական ժառանգն է Շիվան), իրան. Միթրան, սլավ. Սվանտովիտը, հուն. Ապոլոնը, լատ. Մարսը, տե՛ս K. K e r s h a w. նշվ. աշխ., էջ 180-194:

Mannerbund-ի աստվածն է գարձել գերագույն և կենտրոնական կերպար (նոր հնգկական հինդուիստական, գերմանական դիցարաններ)<sup>5</sup>:

2. Ըստ ավանդության, բարեխոյան աշտարակաշինությունից հետո, Հայկ դյուցազնը, չկամենալով հնազանդվել բռնակալ Բելին (նույնացված աստվածաշնչյան ներդրվածին), ելնում է Բարեխոյից և իր «աղխով» (ցեղով) դնում է հյուսիս «յերկիրն Արաբադայ», ապա, ի վերջո, հաստատվում Վանա լճի հյուսիսում (Խորենացի Ա.ժ, Սեբեոս Ա): Բելն իր հսկայական զորքով հարձակվում է Հայկի վրա, բայց սպանվում է: Հայկի բնակեցրած երկիրը նրա անունով կոչվում է Հայք:

Հայկի աղխը ներկայացվում է որպես մի հսկայական նահապետական ընտանիք. այն ընդգրկում էր նրա որդիներին, դուստրերին ու նրանց ժառանգներին, մոտ երեք հարյուր այր: Սրա հետ համեմատելի է մինչև XIX դ. պահպանված Հայ նահապետական ընտանիքը, որը կոչվում էր սովորաբար ազգ: Այն ներառում էր նահապետի հաճախ վեց-յոթ, հազվադեպ՝ ութ սերունդը. ընդ որում, ազգը կոչվում էր նահապետի անունով<sup>6</sup>: Միևնույն ժամանակ, ազգ նշանակում է «ցեղ, ժողովուրդ». նույննշանակություն ունեն նահապետական ընտանիքի համար կիրառվող մյուս տերմինները (ցեղ, տուն և այլն):

Լեզվաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հնդեվրոպական ընտանեկան ազգակցության տերմինները լավագույնս պահպանվել են Հայերենում, ուր բացակայում է դրանցից միայն մեկը (\*nepot-), իսկ մյուս լեզուները կորցրել են ավելի շատ տերմիններ. սա չափազանց հատկանշական է, քանի որ Հայերենը ոչ արխաիկ, և ոչ էլ պահպանողական լեզու է և կորցրել է իր հնդեվրոպական բառապաշարի մի նշանակալի մասը: Ըստ այդմ, Հայերը պետք է որ լավագույնս պահպանած լինեին հնագույն նահապետական ընտանիքը<sup>7</sup>:

<sup>5</sup> Հայոց ազգածագման ավանդության վերաբերյալ համեմատական առասպելաբանությունից համառոտում տե՛ս S. A h y a n. Les debuts de l'histoire d'Armenie et les trois fonctions indo-europeennes. – "Revue de l'histoire de religion" CIC-3. G. D u m é z i l. Le roman des jumeaux, P. 1992, p. 133 seq. Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանական համատեքստում և Հայոց ազգածագման ինդիքը. Երևան 1997. (այսուհետև՝ Արամի առասպելը...): A. Y. P e t r o s y a n. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic. – "Journal of Indo-European Studies Monograph", № 42, Washington D.C. 2002. A. П е т р о с я н. Армянский эпос и мифология. Ереван, 2002. Ս. Հ ա Ր Ո Լ Թ Յ Ո Ը Ն Յ ա ն. Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000:

<sup>6</sup> Э. Т. К а р а п е т я н. Родственная группа "азг" у армян. Ереван, 1966, с. 25. Հայկի աղխի, որպես նահապետական ընտանիքի վերաբերյալ տե՛ս և Э. Т. К а р а п е т я н. Армянская семейная община. Ереван, 1958, с. 43-44:

<sup>7</sup> G. B o n f a n t e. The Armenian Family Terminology. – Միջազգային Հայերենագիտական գիտաժողով. Ջեկոնցումներ. Երևան 1984, էջ 29: Կարծիք կա, որ Հայ աղխը խոռոպարտական փոխառություն է (И. М. Д ъ я к о н о в. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 77, прим. 7; М. Л. Х а ч и к я н. Хурритский и урартский языки. Ереван, 1985, с. 55), որը վիճարկվում է, տե՛ս Գ. Ջ ա հ ո Լ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 425, 486: Ինչևէ, աղխ, աղախին, ծառայ տերմիններն ուչ, ստրկատիրական դարաշրջանի տերմիններ են (որոնք, ընդ որում, բնիկ և միջին իրանական հոմանիշներ ունեն Հայերենում, տե՛ս Գ. Ջ ա հ ո Լ յ ա ն. նշվ. աղխ., էջ 390, 400) և չեն կարող բնորոշել հնագույն-հայկական նահապետական ընտանիքը. մյուս կողմից, Հայկի աղխը կարող է հայ-խոռոպարտական կապեր մատնանշել:

Այս համատեքստում Հայկի աղիւը նահապետական ընտանիք-ազգի առաջին, առասպելաբանական նախատիպն է (հատկանշական է նաև, որ «աղգածին արք» են համարվել միայն Հայկի առաջին յոթ սերունդների այրերը, մինչև Արա Գեղեցիկ, որոնք, ըստ Սեբեոսի Անանունի, ծնվել էին Բաբելոնում և Հայկի հետ միասին գաղթել Հայաստան)։ Հայկի անունը պետք է դառնար անվանումը նրա ազգ-ընտանիքի, որը նախնական բլիջն էր հետագա նույնանուն ազգ-ժողովրդի։ Խորհրդանշական է նաև Հայկի աղիսի այրերի թիվը՝ երեք հարյուր (Խորենացի Ա.Ժ), որը կարող է մեկնաբանվել ըստ հնդեվրոպական ղուգահեռների, հնդեվրոպական «եռամաս գաղափարախոսություն» համատեքստում<sup>8</sup>։

3. Սեբեոսի Անանունի տարբերակում Բելն առաջարկում է Հայկին իզուր չսպանվել իր մանուկների կողմից, այլ անցնել իր մոտ ծառայություն որպես որսորդ մանուկների ղեկավար «մի անկցիս ի ձեռս մանկուտոյ իմոյ և մեռանիցիս. այլ եկ ի ձեռս իմ, և կեաց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործս ղմանկունս ի տան իմոյ ղորսականս»։ Հայկը պատասխանում է՝ «չուն ես դու և յերամակ է շանց՝ դու և ժողովուրդ քո», ապա և իր «լայնալիճ» աղեղի «երեքթեան» նետով սպանում Բելին (Սեբեոս Ա, Թովմա Արծրունի Ա. ք, Խորենացի Ա. Ժ)։

Հայկը, որն այս դրվագում չուն է անվանում իր հակառակորդին ու սպանում նրան, կարող է համադրվել հնդեվրոպական «չուն սպանող» հերոսի հետ։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ այս «չուն սպանողը» եղել է Mannerbund-ի՝ գայլի հատկանիշներով բնութագրվող ռադի աստվածը, որին շներ էին ղոհաբերվում<sup>9</sup>։ Հայոց մօջ Հայկի անունով են կոչվել Մարս մոլորակը և Օրիոն համաստեղությունը<sup>10</sup>։ Հին աշխարհում ամենուրեք, միջագետքյան ազդեցությունը, Մարս մոլորակը կապվել է պատերազմի աստծու հետ (աքադ. Ներգալ, հուն. Արես, լատ. Մարս, միջին պրսկ. Վարհրան)։ Հայկ-Օրիոն համադրության համար էական է, որ այդ համաս-

<sup>8</sup> Ա. Պետրոսյան. Արամի առասպելը..., էջ 62-63. Հմմտ. լատ. տիս «ցեղ» («երեք» արմատից), պոլիսի քաղաքացիների երեք տոհմերի բաժանման հունական (գորիական) մոդելը, Հռոմի բնակչության նախնական երեք հարյուրյակները, կոչված երեք էպոնիմների անուններով և այլն, տե՛ս G. D u m é z i l. Mythes et dieux des indo-européens. Textes reunis et presentes par Herve Coutau-Bégarie. Paris, 1992, p. 87-92: Հատկանշական է, որ Mannerbund-ի անդամները ևս հանդես են գալիս երեքի ռազմապատիկ փոքր խմբերով, իսկ մեծ խմբերում հիսուն, հաճախ՝ երեք հիսնյակ, երբեմն՝ երեք հարյուրյակ, տե՛ս K. K e r s h a w. Նշվ. աշխ., էջ 116, 126-128. П. В и д а л ь - Н а к е. Возвращение к черному охотнику. — «Вестник древней истории», 1989, № 4, с. 25-26. Հայկի երեք հարյուր այրերի վերաբերյալ պատմական համատեքստում տե՛ս Ա. Հ մ ա յ ա կ յ ա ն. Հայկ նահապետի մասին առասպելն ու կիրչա քաղաքը Նիբուրի լեռներում. — «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1992, № 1, էջ 127:

<sup>9</sup> Այս առթիվ տե՛ս O. M a s s o n. Les fragments du poët Hipponax. New York, London, 1987, p. 106; В. В. И в а н о в. Древнебалканский и общиндоевропейский миф о герое-убийце пса и евразийские параллели. Славянское и балканское языкознание: Карпато-восточнославянские параллели. М., 1977, с. 188 сл.; K. K e r s h a w. Նշվ. աշխ., էջ 133-134, n. 2, 246: Հայկի՝ որպես «չուն սպանողի» վերաբերյալ՝ Ա. Պետրոսյան. Թուխ մանուկ. Հնագույն ակունքները. — Թուխ մանուկ. Երևան, 2001, էջ 21-22: А. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 44-46:

<sup>10</sup> Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հատար կամ հեթանոսական կրոնք հայոց. Վենետիկ, 1895, էջ 119 հտն., 124. :

տեղութիւնը կապվել է որսորդութեան առասպելի հետ նաև այլուր<sup>11</sup> (տես նաև ստորև):

Որոշ հանգամանքներ թույլ են տալիս բացահայտել Հայկ անվան ստուգաբանութիւնը: Հայկը և Բել-Ներրովթը հանգես են գալիս որպէս երկու մրցակցող աշխարհների՝ Հայքի և Բարեկոնի էպոնիմներ և, կարելի է ասել, որոշ չափով սիմետրիկ կերպարներ են<sup>12</sup>: Բել անունը ծագում է սեմական *b'l* «տեր» արմատից, որը հայտնի է որպէս մեծ աստվածների (էնլիլ, Մարդուկ, Աշուր) կոչում և դիցանունների բաղադրիչ (Բալու, Բա'ալչամեմ, Յարիսբու, Մալաբրել և այլն)<sup>13</sup>: Սա ցույց է տալիս Հայկի անվան կապը հնդեվրոպական \**poti-* «տեր, ամուսին, նահապետ» տերմինի հետ (բնորոշ նվազական -իկ ածանցով, հմմտ. Հայկի որդու նմանատիպ նվազական ածանցով կազմված Արամանեակ/Արամենեակ անունը, ապա և Աստղիկ դիցանունը): Այս ստուգաբանութիւնը հաստատում է բրբռ. Հայ «ամուսին» (այսինքն «ընտանիքի գլխավոր», հմմտ. հատկապես մեր Հայը արտահայտութիւնը) տերմինը: Հայկը Հայոց առաջին, դիցաբանական նահապետն էր, որի կերպարը և կոչումը պետք է կրկնեին իրական նահապետները. ընդ որում, Հայկի մակդիր նահապետ տերմինի երկրորդ բաղադրիչը միևնույն հնդեվրոպական արմատի իրանական ժառանգն է (հմմտ. նաև \**dems-* *pot-* «տան տեր» և \**wik'-* *pot-* «կլանի, համայնքի պետ»): Ըստ այդմ, Հայկը կարող է գիտվել որպէս հնագույն աստվածների նահապետի պատմականացած տարրերակը (Հայկի ստուգաբանութեան վերաբերյալ տե՛ս նաև ստորև):

Որոշ առումներով Հայկի լավագույն հնդեվրոպական զուգահեռն է հնդկական ռազմիկ և որսորդ աստված նետածիգ Ռուդրան, իր վայրի, սարսափազդու *Männerbund-ի*՝ ռուգրանների Հայրն ու առաջնորդը: Հնդկաստանում Օրիոն համաստեղութիւնն անձնավորվում է որպէս արարիչ աստված Պրաջապատի, եղջերուի տեսքով, որին նետահարում է Ռուդրան «եռամաս նետով» (*isus trikanda*՝ Օրիոնի գոտու երեք աստղերն են. հատկանշական է, որ դրանք Հայոց մեջ կոչվում են Ծամփուրք): Ռուդրայի բնութագրական մակդիրների (*ganapati*, *vratapati*, *bhutapati*, *pasupati*, *grhapati*, *sthatpati*, *sabhapati*), ինչպէս և *Prajapati* անվան երկրորդ մասերը հանգում են հնդեվրոպական \**poti-*ին<sup>14</sup>:

<sup>11</sup> Օրինակ, Հնդկաստանում այս համաստեղութիւնը կապվում է որսորդ Ռուդրայի և Պրաջապատիի, իսկ ուշ հրեական ավանդութիւնում «զորավոր որսորդ» Ներրովթի հետ. Հունական Օրիոնն էլ մի հսկա որսորդ էր, որին Բեոտիայում Կանդաոն «Շուն խեղդող» էին անվանում. տե՛ս R. H. A l l e n. *Star Myths: Their Lore and Meaning*. New York, 1963, p. 303 ff., 309-310:

<sup>12</sup> Հայ ազգածին նահապետների և նրանց հակառակորդների կերպարային համապատասխանութեան վերաբերյալ տե՛ս S. A h y a n. Նշվ. աշխ., էջ 270-271. G. D u m e z i l. Նշվ. աշխ., էջ 133 հտն.: Պետք է նկատել, որ մյուս կողմից, Բելը, որպէս հակառակորդ, համապատասխանում է «հիմնական առասպելի» օձ-վիշապին:

<sup>13</sup> Տե՛ս օրինակ Мифы народов мира. Т. 1, М., 1980, с. 116:

<sup>14</sup> Օրիոն-Պրաջապատի համաստեղութեան վերաբերյալ տե՛ս R. H. A l l e n. Նշվ. աշխ., էջ 309-310; J. F o n t e n r o s e. *Orion: the Myth of the Hunter and the Huntress*. Berkeley, Los Angeles, London, 1981, p. 239-240. Э. Н. Т е м к и н, В. Г. Э р м а н. Мифы древней Индии. М., 1985, с. 16-18, 276-277. Ռուդրայի վերաբերյալ՝ К. К е r - s h a w. Նշվ. աշխ., էջ 210-213, 242-244, 252:

4. Հայկի վեցերորդ սերնդի զարմն էր Արամը, որը կատարում է բազմաթիվ սխրագործություններ, հաղթում երեք հզոր հակառակորդներին և լայնացնում Հայաստանի սահմանները բոլոր ուղղություններով (Խորենացի Ա.ժգ, Սեբեոս Ա): Նրա անունով այլ ազգերը Հայք երկիրը կոչում են Արամենիա և նման ձևերով (Սեբեոսի մոտ այս դերը կարծես թե վերագրվում է Հայկի որդի Արամենակին<sup>15</sup>): Որպես հայոց էպոնիմներ, Հայկի և Արամի կերպարները, կարելի է ասել, որ որոշակիորեն համադրելի են՝ Մ. Աբեղյանի արտահայտությունը Արամը «Հայկի մի երկրորդ տիպարն է»<sup>16</sup>:

Արամն ընդարձակում և այդպիսով վերստեղծում է Հայաստանը հինգ բյուր երիտասարդների («նորատիք») դուրս անցած (Խորենացի): Արամի առավել ակնհայտ անվանաբանական զուգահեռներն են հնդկական Ռամա անունով հերոսները (հայերենում բառը չի կարող սկսվել Ի-ով և նախաձայն a-ն հավելում է): Rama-ն հին հնդկերենում նշանակում է «սև, թուխ» (հնդեվրոպական \*rē-mo-/\*rō-mo-). Արամի հնարավոր նախաձևն է \*rHmo-/a) և առասպելաբանության մեջ էլ Ռամաներից առաջինը՝ Պարաշուռաման, Հնդկաստանի հարավը «արիականացնող» հերոսը, հանգես է գալիս որպես «սև, թուխ» կերպար, որը հաղթում է «սպիտակ, փայլուն» Արջունային (Մահաբհարատա 3.115-116): Քննությունը ցույց է տալիս, որ Արամը ամպրոպի աստծու մի վիպականացած և պատմականացած տարբերակն է, իսկական թեչուբի և էպոսի Սանասարի համապատասխանությունը<sup>17</sup>: Հատկանշական է, որ հնդկական Ռամա անունով ամենանշանավոր հերոսը ևս ամպրոպի աստված Ինդրայի վիպականացած մի տարբերակն է<sup>18</sup>:

5. Բելը հասուն այրերի առաջնորդ և անկախ ցեղապետ Հայկին իր մոտ «մանկունք որսականք»-ի առաջնորդի պաշտոն է առաջարկում: Այդ կարգավիճակը, որը ստորացուցիչ էր Հայկի համար, միանգամայն համապատասխանում է Արամի՝ «նորատի» զորքի առաջնորդի կերպարին: Արամի «սև, թուխ» ստուգաբանության, նրա «նորատի» զորքի և Հայկի «մանկունքի» համադրությունը մեզ բերում է հայոց ավանդական «թուխ մանուկի» կերպարին: «Թուխ մանուկը» քրիստոնեական սրբավայր ուխտատեղիների մի առանձին տիպ է, բայց վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ կոչումը սկզբնապես պետք է վերաբերեր Mannerbund-ի անդամներին<sup>19</sup>:

Ըստ Ա. Այդինյանի, թուխ տերմինը ստուգաբանորեն առնչվում է թխելու հետ<sup>20</sup>: Վերջինս էլ, բացի ակնհայտ հաց թխելուց, ըստ նոր հայկազյան

<sup>15</sup> Գ. Մ ա ղ ս յ ա ն. Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու պատմության մեջ. — ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 123: Թվում է թե Արամենակն այստեղ իրենում միավորել է նաև Արամի կերպարը:

<sup>16</sup> Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 55:

<sup>17</sup> Ա. Պ ե տ ը ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 12 հտն. առասպելական Արամի և Ուրարտուի առաջին արքա Արամուի (կարգալ Aramo) անունների կապի վերաբերյալ էջ 132-133, տե՛ս և A. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 47-49, 78-79:

<sup>18</sup> J. P u h v e l. Comparative Mythology. Baltimore. London, 1987, p. 92-93.

<sup>19</sup> Այս առթիվ տե՛ս Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. «Թուխ մանուկ» հուշարձանների մասին. — ՊԲՀ, 1976, № 2, էջ 193-195, ապա և. — Թուխ մանուկ, ուր ի մի են բերված թուխ մանուկի վերաբերյալ եղած աշխատությունները:

<sup>20</sup> Ա. Ա յ դ ի ն յ ա ն. Մորի-մորենի բառի ծիսաառասպելաբանական հնարավոր առնչությունների արտացոլումը հայ միջնադարյան գրական և բանահյուսական աղբյուր-

բառարանի, նշանակում է «ջեռուցանել և հասունացուցանել որպես հաւու գձուս» (Հմմտ. «ի թուխս նստել»), և բերվում են օրինակներ՝ «կաքաւն... թխեալ գձագ հանէ», «ագուան գգձագն թխէ» և այլն: Այսպիսով, թուխը կարող է մեկնաբանվել որպես «ջերմային մշակման հետեանքով եփված-հասունացած», «այրված, մրոտված, ածխացած-սևացած»<sup>1</sup>:

Ընդհանրապես, պատանիների նվիրագործութայան (ինիցիացիա) ծեսերը իմաստավորվում են որպես մահ՝ այց անգրաշխարհ և հետագա վերածնունդ նոր, ավելի բարձր հասարակական դիրքով, որի հետեանքով նրանք հասուն այրերի՝ ցեղի լիիրավ անգամի կարգավիճակ և ամուսնանալու իրավունք էին ստանում: Կարևոր դեր են կատարել ջերմային, կրակի հետ կապված փորձությունները (ընդ որում, որոշ ծեսերի ժամանակ նվիրագործյալները նույնիսկ վտանդավոր այրվածքներ են ստացել)<sup>2</sup>: Այդօրինակ ծեսերն էական են եղել հնդեվրոպական ռադիկալի նվիրագործութայան ժամանակ<sup>3</sup>. դրանց հետքերը սլահապանվել են նաև հայկական ազգադրական նյութում<sup>4</sup>:

Հերոսի վառարանում հացի նման թխվել-եփվելու բանահյուսական մոտիվը, որպես նվիրագործութայան համապատասխան ծեսի արձագանք, տարածված է հատկապես հեքիաթներում, որտեղ կարևորագույն գեր ունեն նվիրագործութայան ծեսերի հիշողությունները: Ըստ Վ. Ն. Տոպորովի, որը քննարկել է այդ մոտիվը ռուսական բանահյուսութայան համատեքստում, կրակի մեջ զրվող մարգը և հացը որոշակիորեն համագրելի են իրար հետ և հանդես են գալիս որպես «մեկ մեծ գաղափարի համանուն կերպարներ»: Դրա նպատակն է պտղաբերութայան ու կենսունակութայան մեծացումը, հա-

ներում (ձեռագիր). Նույնի՝ «Թուխ մանուկի» պաշտամունքի որոշ արտացոլումներ հայրեններում. - Թուխ մանուկ, էջ 46:

<sup>21</sup> Հ. Աճառյանը տարբերակում է երեք նույնանուն թուխ- արմատ՝ 1. «սև», 2. «հավերի ձագ հանելը», 3. «հաց եփելը» (Հայերեն արմատական բառարան. հ. 2. Երեւան, 1973, էջ 203-204): Ասվածը թույլ է տալիս միավորել այս արմատները և բրբռ. թխել «ղարները» համարել երկրորդային զարգացում, լավաչը թոնրին զարնելով թխելուց առաջացած: Ըստ այդմ, թուխ տերմինը կարող է հանգեցվել հնդեվրոպական \*Ier- «տաք» արմատին, որի \*Ior- ձայնգարձային տարբերակի \*io-ով ածանցյալ նախածեղից (Հմմտ. ռուս. ТОПИТЬ «այրել», ТЕПЛО «տաքություն») կանոնավոր կերպով կառաջանար հայ. \*թուղ- հիմքը: Հատկանշական է, որ Վանա լճի ավազանի թուխ գետը, որի մոտ է եղել թուխ մանուկներից մեկը (Ա. Մ ն ա գ ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 196), հնում կոչվել է նաև Թուղիս, որը պետք է լիներ թուխ-ի հնագույն ձևը և ակնարկում է, որ -իս-ն այստեղ ածական է: Հետագայում, թուղ-ը վերածվել է թուխ-ի՝ նաև առասպելաբանաստեղծական լեզվի օրինաչափությունների համաձայն, միևնույն ոլորտին պատկանող ածուխ, ծուխ, մուխ բառերի պարզացումը. նկատենք, որ ածուխ բառը ևս պետք է որ ծագեր ածուղ < ածող/անձող ձևերից (Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 183):

<sup>22</sup> Նվիրագործյալներին «այրելու», «խորովելու» և «թխելու» ծեսերի վերաբերյալ տե՛ս օրինակ M. E i a d e. Rites and Symbols of Initiation. The Mysteries of Birth and Rebirth. New York, 1975, p. 7, 138, n. 13. В. Я. П р о п п. Исторические корни волшебной сказки. Л., 1986, с. 98-103.

<sup>23</sup> Տե՛ս օրինակ, G. D u m é z i l. The Destiny of the Warrior. Chicago and London, 1970, p. 133 ff., ուր այս ծեսերը քննվում են «Վահագնի ծնունդի» առնչությամբ (այս մասին տես և ստորև). K. K e r s h a w. Նշվ. աշխ., էջ 82, 197-198: Հատկանշական է, որ առասպելաբանական տեքստերում ռադիկալի տիրող ցատումը միշտ համադրվում է ջերմութայան, կրակի հետ:

<sup>24</sup> А. В. В а р д а н я н. Традиции мужских возрастных групп у армян (конец XIX - начало XX вв.). - "Армянская этнография и фольклор", 12, Ереван, 1981, с. 111-112.

րությունը՝ այսինքն նոր, «ուժեղացված» կյանքի հասնելը մահվան միջոցով (այսպիսով, հիշյալ ջերմային ծեսերը կարող են համադրվել դիակիրգման հետ): Միևնույն գաղափարն է ընկած «հիմնական առասպելի» հիմքում, ուր ամպրոպի աստվածը կայծակով այրում է իր հակառակորդ օձվիշապին, կամ որպես հակառակորդ հանդես եկող իր կնոջը կամ որդուն: Ընդ որում, գործողութայն սուբյեկտը և օբյեկտը որոշ առումներով համադրելի են<sup>25</sup>:

Հայ բանահյուսութայն մեջ անձրևաբեր/ամպրոպային սև ամպն անձնավորվում է ամպրոպի աստծու վիպական հետնորդի՝ Սանասարի և թուխ մանուկի կերպարներով<sup>26</sup> (նույնը կարելի է ասել նաև հարևան հին ու նոր ժողովուրդների «սև» կերպարների վերաբերյալ)<sup>27</sup>: Այսինքն, թուխ մանուկների երկնային նախատիպն ու հովանավորն էր ամպրոպի «սև» աստվածը, Սանասարի և Արամի աստվածային համապատասխանությունը, որը պետք է որ ընկալվեր որպես առաջին թուխ մանուկ և թուխ մանուկների առաջնորդ: Հայերին մերձավոր ազգակից Հնդեվրոպական (հունական ու Հնդիրանական) և հարևան կովկասյան ավանդույթներում բազում են «թուխ մանուկի» զուգահեռները, որոնցից շատերը կապված կրակի, այրվելու հետ<sup>28</sup>:

<sup>25</sup> В. Н. Т о п о р о в. Индоевропейский ритуальный термин *souh-, etro-(etlo-, edhlo-)*. – “Балто-славянские исследования”, 1984, М., 1986, с. 81–82; о н ж е. Заметки по похоронной обрядности (к 150-летию со дня рождения А. Н. Веселовского). – “Балто-славянские исследования”, 1985, М., 1987, с. 13 Հտն. և հեղինակի այլ աշխատություններն այդ թեմայով: Հայկական հեքիաթներում թոնրի հետ կապված նման մոտիվները տե՛ս С. А. Г у л л а к я н. Указатель мотивов армянских волшебных сказок. Ереван, 1983, с. 313.

<sup>26</sup> Մ. Ա ս ե ո յ ա ն. Երկեր, հ. Ա, էջ 414–417, Ա. Պ ե տ Ր ո ս յ ա ն. Թուխ մանուկ..., էջ 29–30, Վ. Ա յ դ ի ն յ ա ն. «Թուխ մանուկի»..., էջ 47–49:

<sup>27</sup> Օրինակ, ամպրոպի աստծու խեթական ծեսերի ժամանակ սև անոթներ էին օգտագործվում և սև հաց ու սև կենդանիներ ղոհաբերվում (В. Г. А р д з и н б а. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 213-214), որը մատնանշում է այդ աստծու կապը սևի հետ: Կովկասում էլ «Սև նարթը» հանդես է գալիս որպես ամպրոպի աստծու մի անձնավորումը, տե՛ս У. Б. Д а л г а т. Кавказские богатырские сказания древних циклов и эпос о нартах. – «Сказания о нартах – эпос народов Кавказа». М., 1969, с. 111–112.

<sup>28</sup> Հատկապես ուշագրավ են «կովկասյան իրանցիների»՝ օսերի բանահյուսական տվյալները: Ամպրոպի աստծու բանահյուսական հետնորդի՝ Ուացիլա-սուրբ Եղիայի հնագույն զուգորդը երկու բարբառներով կոչվում է *Tuxost, Tuxwast*. Հաշվի առնելով օսական և կովկասյան ավանդույթներում հայկական ազդեցության փաստը (Փ. X. Г у т н о в. Генеалогические предания осетин как исторический источник. Орджоникидзе, 1989, с. 7-10. Ա. Պ ե տ Ր ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 113. А. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 180–185. Տ. Դ ա լ ա յ ա ն. Հայոց վիպական Սաթենիկ թաղուհու կերպարի ծագումնաբանության շուրջ. – ՊԲՀ 2002, № 2, էջ 210), այս անվան առաջին մասը կարելի է հանգեցնել Հայ. թուխ-ին (անվան օսական մեկնաբանությունը միայն մտահայեցողական է. տես Ж. Д ю м е з и л ь. Скифы и нарты. М., 1990, с. 54): Օսական երիտասարդ կտրիճները կոչվել են *saw læppu* «սև սղա», իսկ էպոսի մեծ հերոս Սոսլանին խարուկի վրա այրել-չիկացնելուց հետո դարբին աստվածը կոչվում է գայլի կաթում. այսինքն այստեղ համատեղվում են նվիրագործության ջերմային փորձությունը և «գայլի վերածվելը» (Սոսլանի տոհմի հիմնադիրն էլ կոչվում է Ուարիսագ «Գայլ». այս մասին տե՛ս В. И. А б а е в. Как можно улучшить этимологические словари. – „Этимология“, 1984, М., 1986, с. 21; о н ж е. Историко-этимологический словарь осетинского языка. Т. III, М., 1979, с. 42-43, 96-97. Сказания о нартах: осе-

Այլուրեք ևս Mannerbund-ի անգամները և նրանց առասպելաբանական համապատասխանությունները կապված են «սևի, մուգ դույնի» հետ և հանդես են գալիս մրով կամ այլ նյութերով ներկված<sup>29</sup>: Ավելին, Արամի անվան \*remo- արմատը արտացոլվել է հետևյալ ձևերում: Հին անդլ. rōmig «մրոտ», Հին բարձր դերմ. ramak «կեղտոտ», միջին բարձր գերմ. rām, rōm «կեղտ, մուր», Հին հնդ. rama- «մուգ, սև»: Ըստ այդմ, դրա իմաստը կարող է վերականգնվել ոչ թե որպես պարզ «թուխ, սև, մուգ դույնի», այլ նաև «այրված-սևացած, մրոտ»:

6. Ըստ արդի գիտությունների, վաղնջական հնդեվրոպական հասարակություններում տղան սկզբից անցնում էր ղինված պատանիների կարգը և, որպես ամուրի և անհող պատանիների Mannerbund-ի անգամ, դաստիարակ-հրամանատարների ղեկավարություն տակ որսորդությունում և ավազակությունում, հատկապես գայլի վարքը նմանակելով, ապրում ցեղի տարածքի եզրերին, սահմանային շրջաններում: Մոտ 20 տարեկանում նա ճանաչվում էր ցեղի լիիրավ անգամ և կարող էր ընդգրկվել ավելի հեղինակավոր ռազմական միավորումների կազմում, ամուսնանալ, պահպանել իր տունը և ունեցվածքը: Ցեղի հասուն անգամները կոչվել են \*Hner-, իսկ ունեցվածքը, որով նրանք տարբերակվել են պատանիներից՝ \*poti- արմատներով. ցեղը բաղկացած է եղել երեք, երեքմյակ չորս կլանից<sup>30</sup>:

Արամի «նորատի» ռազմիկները ակնհայտորեն համադրելի են պատանեկան հրոսակախմբին, մինչդեռ Հայկի աղխը հիշեցնում է ողջ եռամաս ցեղը և հասուն ռազմիկների կառույցը: Հատկանշական է, որ Հայկի հետևորդները կոչվում են այրեր (այս տերմինով նշանակվում են ամուսնացած տղամարդիկ և այն ծագած է համարվում \*Hner-ից), Հայկ անունը համադրելի է \*poti-ին, իսկ նրա աղխի այրերի թիվն է երեք հարյուր:

Նոր հողերի յուրացումն ու նոր բնակավայրերի հիմնումը սովորաբար կապվում է պատանեկան խմբերի հետ. ըստ բազում ավանդությունների՝ նրանք իրենց աստվածների առաջնորդությունում հեռանում էին իրենց տարածքներից ու հաստատվում նոր հողերում<sup>31</sup>: Հայաստանի հիմնադրումը վերագրվում է Հայկին ու նրա այրերին, որն այլ մեխանիզմ է ենթադրում ողջ ցեղի տեղափոխություն: Սա կարծես չի համապատասխանում հնդեվրոպական վերակազմությանը և կարող է բացատրվել Աստվածաշնչի ազդեցությամբ՝ Հայկին, ինչպես և աշխարհի բոլոր ժողովուրդների նախնի-

ТИНСКИЙ ЭПОС. Цхинвали 1981, с. 85-87. «Թուխ մանուկների» մի շարք այլ զուգահեռներ տե՛ս Ա. Պետրոսյան. «Թուխ մանուկ»..., էջ 31-38:

<sup>29</sup> Հնդեվրոպական (հնդկական, գերմանական, կելտական և այլ) պատանեկան ընկառնների կամ նրանցից ծագած միավորումների «թուխ» ռազմիկների վերաբերյալ տե՛ս K. Kershaw. Նշվ. աշխ., էջ 26, 27, 30, 42, 89, 185, 202, 211, 267, աղբյուրների հղմամբ: Հին հունական նվիրագործյալ պատանիների՝ որպես «սև որսորդների» վերաբերյալ՝ P. Vidal-Naquet. The Black Hunter. Baltimore, 1986, p. 106 ff.

<sup>30</sup> Այս վերակազմության համար տե՛ս K. Mose. Hund, Wolf und Krieger bei den Indogermanen. Studien zum Indogermanischen Wortschatz. Innsbruck, 1987, S. 101-154: Ցավոք, այս աշխատությունը անմատչելի մնաց մեզ և հղվում է ըստ J. P. Mallory, D. Q. Adams. Encyclopedia of Indo-European Culture. London, Chicago, 1997, p. 6-7, 531, 632-633:

<sup>31</sup> K. Kershaw. Նշվ. աշխ., էջ 133-138, 172-173: «Սև հերոսների» կողմից նոր քաղաքների հիմնման վերաբերյալ՝ A. Петросян. Նշվ. աշխ., էջ 78-84:

ներին Բաբելոնյան աշտարակաշինության հետ կապելու մտայնությունը և, թերևս, պատմական հանգամանքներով<sup>32</sup>: Պետք է հաշվի առնել, որ Հայկը միարժեք կերպար չէ. նա իրենում ներառել է մի կողմից հայր աստծու, մյուսից ամպրոպի աստծու դործառույթները<sup>33</sup>:

Հայկի և Արամի առավել ակնառու զուգորդներն են, ինչպես տեսանք, հնդկական Ռուզրան և Ինդրան (այս համադրություններն, իհարկե, միարժեք չեն, քանի որ Հայկը ևս համադրելի է ամպրոպի աստծուն և հենց Ինդրային): Հայկի այրերը և Արամի նորատիներն էլ հիշեցնում են համապատասխանաբար Ռուզրայի հետևորդ ուղղափառներին և Ինդրայի հետևորդ մարուտներին: Վերջիններս նույնպես Ռուզրայի որդիներն են և կարող են դիտվել որպես ուղղափառների մի դասը, ավելի դրական բնութագրով: Նրանք, թեև լուսավոր/կրակե կերպարներ են, բայց պատկերվել են սև հագուստով<sup>34</sup> և այլ հատկանիշներով ուղղակի նույնական են թուխ մանուկներին: Այսպես, նրանք դիցաբանական արտացոլումներն են երկրային պատանի ռազմիկների (marga-), կապված են կայծակի հետ և նրանց հիմնական դործառույթունն անձրևի առաքումն է: Որպես ջերմածին էություններ նրանք կոչվել են samtāpana, \*ter- «ջերմություն» արմատից<sup>35</sup> (հմտ. թուխ < \*ter- մանուկը որպես անձրևաբեր՝ կայծակնային ամպի անձնավորում):

7. Կրակի հետ է առնչվում հայոց նախաքրիստոնեական դիցարանի ռազմի և քաջության աստված Վահագնը, որի ծննդյան հիմնը հասել է մեզ Խորենացու հազորդամար (Ա.լա):

Երկնէր երկին, երկնէր երկիր,  
Երկնէր և ծով ծիրանի.  
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեղնիկ.  
Ընդ եղեղան փող ծուխ ելանէր,  
Ընդ եղեղան փող բոց ելանէր,  
Եւ ի բոցոյն վազէր խարտեաչ պատանեկիկ.  
Նա հուր հեր ունէր,  
Բոց ունէր մօրուս,  
Եւ աչկունք էին արեգակունք:

Այս հիմնը, ի թիվս այլ բազմաթիվ մեկնաբանությունների, կարելի է համադրել պատանու նվիրագործության ծեսի հետ, քանզի նվիրագործությունն ամենուրեք ներկայացվել է որպես երկրորդ ծնունդ: Նրա մագերի վերացումը նվիրագործության մշտական պահերից է. ավելին, որոշ ծեսերում նվիրագործյալների մազերն այրվում էին, որն արտահայտվել է նաև համապատասխան բանահյուսական տեքստերում<sup>36</sup>:

<sup>32</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ.:

<sup>33</sup> Հայկի՝ որպես ամպրոպի աստծու վերաբերյալ տե՛ս հատկապես А. Петросян. Նշվ. աշխ., էջ 61–64, 107–115:

<sup>34</sup> K. Kershaw. Նշվ. աշխ. էջ 202:

<sup>35</sup> Մարուտների վերաբերյալ այս համատեքստում տե՛ս K. Kershaw. Նշվ. աշխ., էջ 214, 216:

<sup>36</sup> Տե՛ս օրինակ В. Я. П р о п п. Նշվ. աշխ., էջ 100, 136–138: Ա. Պ ե տ Ր ո ս յ ա ն. «Թուխ մանուկ»..., էջ 39 հտն.:



երրորդ անգամ այրասիրտը ջրերում էր...<sup>40</sup>:

Ընդհանրապես, Ագնին կոչվում է *tri-saustha*- «երեք բնակավայր ունեցող»: վեդայական համատեքստում նա ծնվում է՝ 1. երկնքում, որպես կայծակ, 2. երկրի վրա, որպես զոհաբերություն կրակ և 3. ծովում, որպես արև<sup>41</sup>: Այս հատկանիշներով Ագնին ուղղակի նույնանում է Վահագնին, որին ուսումնասիրողները համարել են արևի, կրակի կամ ամպրոպ-կայծակի աստված (այսպիսով, Վահագնը, ինչպես Ագնին, թերևս համատեղել է այդ գործառույթները)<sup>42</sup>:

Մյուս կողմից, Վահագնը համադրելի է շումերական առասպելաբանության *Asag* (աքադ. *As/sakku*) հրեշին, որին Տիգրիսի ակունքներում հաղթում-սպանում է Նինուրտա աստվածը: «Լուգալ» էպոսում պատմվում է, որ Ասագը ծնվում է երկնքից (հայր) և երկրից (մայր), «որպես մի ռազմիկ, որ սարսափ չունի» (տող 28–29): Հետո ասվում է, որ նա «կրակ գցեց եղեգնուտները, արյունով ողողեց երկինքը», և «դաշտերը դարձան... կարմրավուն, ինչպես ծիրանի ներկը» (տող 178–181)<sup>43</sup>: Այս պատկերն այնքան բացահայտ է համապատասխանում «Վահագնի երգին», որ հատուկ մեկնաբանությունների կարիք չկա: Նշենք միայն, որ հայոց «ծիրանի ծովը» տեղայնացվել է երկնքի և երկրի միջև և այլ կերպ կոչվել է «արյուն ծով»<sup>44</sup>, այսինքն միանգամայն համապատասխանում է շումերական «արյունով ողողված» երկնքին:

Հատկանշական է, որ և՛ Հին Միջագետքում, և՛ Հայաստանում այրվող եղեգնի բանաստեղծական պատկերն առնչվել է ռազմիկ աստվածությունների ու հերոսների հետ, որը ցույց է տալիս այդ կերպարների ընդհանուր ծագումը: Այսպես, «Համմուրաբիի օրենսգրքի» վերջաբանում ասվում է՝ «Թող Ներդալը... այրի նրա զորքը... ինչպես ճահճի եղեգնուտի մոլեգին

<sup>40</sup> Բերվում է ըստ անգլերեն թարգմանության, տե՛ս The Rig Veda. Sacred Writings. V. 5, Transl. by T. H. Griffith. New York, 1992, p. 563. Հմտ. Т. Я. Е л и з а р е н к о в а. Ригведа. Т. III, М., 1999. «Վահագնի երգը» բազում ակնհայտ զուգահեռներ ունի վեդայական հիմներում, որոնց մասին առաջինը և լավագույնս գրել է Մ. Էմինը, տե՛ս Н. О. Э м и н. Вахагн-Вишапаках' армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды. Исследования и статьи Н. О. Эмина. М., с. 82–83 (բերված առավել ակնհայտ զուգահեռները Ագնինի նվիրված հիմներից են):

<sup>41</sup> G. N a g y. Նշվ. աշխ., էջ 99–104.

<sup>42</sup> Հարցի պատմությունը և գրականությունը տե՛ս G. Y. A r e s h i a n. Armenian and Indo-European Cosmogonic Myths and Their Development.— “Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics”. Delmar, New York, 1992, p. 7 ff.

<sup>43</sup> Ըստ անգլերեն թարգմանության՝ It (Asag.— A. P.) set fire to the reed-beds, bathed the sky in blood, turned it inside out; it dispersed the people there. At that moment, on that day, the fields became black potash, across the whole extent of the horizon, reddish like purple dye—truly it was so! (IV, 42–44): Բնագիրը և անգլերեն թարգմանությունը տե՛ս ինտերնետային Electronic Text Corpus of Sumerian Literature. The Exploits of Ninurta: Նույն սեքսաի հղված հատվածների մեկ այլ անգլերեն թարգմանություն տե՛ս J. V. K i n n i e r W i l s o n. The Rebel Lands. An Investigation into the Origins of Early Mesopotamian Mythology. London, New York, Melbourne, 1979, p. 27, 29: Ցավոք մեզ անմատչելի մնաց «Լուգալ» էպոսի ֆրանսերեն թարգմանությունը (J. V a n D i j k. Lugal ud me-lam.bi nir.gal. Le récit épique et didactique des Travaux de Ninurta, de deluge et de la Nouvelle Création I-II. Leiden 1983):

<sup>44</sup> Մ. Ա բ ե դ յ ա ն. Երկիր. Հ. է, Երևան, 1985, էջ 65–66:

կրակը»<sup>45</sup>. Ներգալի կրկնակ էրրա աստծու մասին՝ «Հերոսը... ամայացրեց շամբի ու եղեգնի մացառուտները և այրեց ինչպես կրակ» («Պոևմ էրրայի մասին»։ բերվում է ըստ ինտերնետային անգլերեն թարգմանության)։ Սրանց հետ համահունչ է «հուր բոց 'ի գնգին ելանիցէր և 'ի նշանացն, իբրև 'ի հուրն հրգեհի այնպես անցանէր ընդ գունգն որպես բոց ընդ եղեգն» (Մուշեղ Մամիկոնյանի «մոլեկան» գնգի մասին. Փավստոս Բուզանդ, Ե.Ե. այստեղ ուղղակի կրկնվում են «Վահագնի երգի» պատկերը և տերմինաբանությունը)։ Նկատենք, որ Ներգալը նույնացվել է Հայկին, իսկ Վահագնի պաշտամունքի կենտրոն Տարոնի տերերի՝ Մուշեղի և մյուս Մամիկոնյան սպարապետների վիպականացած կերպարները ձեռք են բերել Վահագնի հատկանիշները։

Ասագը, կարելի է ասել, կրակի գեմոն է (նույնացված որպես յոթգլխանի օձ-վիշապ՝ MUS SAG IMIN. տող 134)<sup>46</sup>. ավելին, Նինուրտան, որը նույն էպոսում երկու անգամ «օձ» է կոչվում, կարող է գիտվել որպես կրակի մի աստված<sup>47</sup>։ Ընդհանրապես, առասպելաբանական հակամարտություններում հակառակորդ կողմերի հատկանիշներն ու ատրիբուտները փոխանակելի են<sup>48</sup>, այսինքն՝ այստեղ, ինչպես և Հայկի ու Բել-Նեբրովթի ավանդույթյան մեջ, իրար են հակադրվում Հայկական լեռնաշխարհի հարավի և Միջագետքի երկու որոշակիորեն «սիմետրիկ» աստվածություններ, որոնցից հակառակորդ կողմը առավել չափով է օժտված է օձ-հրեշի հատկանիշներով։

Այս համապատասխանությունը, մի շարք այլ միջագետքյան-հնդեվրոպական նմանատիպ համընկումների հետ, կենտրոնացած Հայկական լեռնաշխարհի հարավում և հարակից շրջաններում<sup>49</sup>, հնարավորություն է տալիս այդտեղ տեղայնացնելու շումերա-հնդեվրոպական շփումները, ուր, ըստ հնագիտական տվյալների, շումերական ֆակտորիաներն ի հայտ են գալիս արդեն մ.թ.ա. չորրորդ հազարամյակից<sup>50</sup>։

9. Ասադին սպանելու տեղում Նինուրտան մի քարե լեռ է կառուցում, որտեղից սկիզբ է առնում Տիգրիսը։ Այս վայրը պետք է տեղայնացվի Տիգրիսի վտակներից մեկի՝ Անգղ գետի (թուրք. Զիբենե-սու կամ Դիբենե-սու) թունելի շրջանում, Մեծ Հայքի Ծոփք նահանգի Անգեղ տուն գավառում,

<sup>45</sup> Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament. Princeton, 1969, p. 180.

<sup>46</sup> J. V. K i n n i e r W i l s o n. Նշվ. աշխ. էջ 23-30:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 24-25, 71-76, 121-122, ծանոթ. 8:

<sup>48</sup> Այս մասին, հնդեվրոպական ամպրոպային առասպելի համատեքստում տե՛ս В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Инвариант и трансформация в мифологических и фольклорных текстах. Типологические исследования по фольклору. — "Сборник статей памяти В. Я. Проппа". М., 1975, с. 49: Վահագնի հին հնդկական զուգորդ ինգրայի և նրա հակառակորդ Վրիտրա հրեշի նույնական ատրիբուտների վերաբերյալ տե՛ս E. B e n v e n i s t e, E. R e n o u. Vrtra et Vr̥tragna. Etude de mythologie indo-iranienne. Paris, 1934, p. 138:

<sup>49</sup> А. П е т р о с я н. Նշվ. աշխ.:

<sup>50</sup> Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հնագույն կապերի վերաբերյալ, ըստ հնագիտական վկայությունների, տե՛ս մանրամասն А. S h e r a t t. Echoes of the Big Bang: The Historical Context of Language Dispersal.— In: «Proceedings of the Tenth Annual UCLA Indo-European Conference». Washington, 1999, p. 270 ff. տե՛ս և История древнего мира (под ред. Г. М. Бонгард-Левина). Т. 2. М., 1988, с. 212:

որտեղից, ըստ Հին միջագետքյան պատկերացումների (գոնե ըստ ասորեստանցիների), սկիզբ էր առնում Տիգրիսը<sup>51</sup>:

Նշված Հայկական տեղանուններն ակնհայտորեն կապված են Անգեղ դիցանվան հետ, որն Աստվածաշնչի Հայերեն թարգմանության մեջ փոխարինում է Հին միջագետքյան պատերազմի, ժանտախտի և անդրաշխարհի աստված Ներգալին (Դ Թառ. Ժէ. 30): Բարելոնում հրակարմիր Մարս մոլորակը, ինչպես տեսանք, կոչվել է Ներգալ, իսկ Հայոց մեջ՝ Հայկ: Այսպիսով, կարելի է խոսել Ներգալ-Անգեղի և Հայկի որոշակի նույնացման մասին: Մյուս կողմից, պետք է համապատասխանություն ենթադրել Տիգրիսի ակունքի շումերական և Հայկական դիցաբանական կերպարների՝ Ասագի և Անգեղ-Ներգալ-Հայկի միջև:

Կարծում են, որ աստվածաշնչյան Նեբրովթի անունը և կերպարը հանգում են, ի վերջո, Նինուրտային<sup>52</sup>: Ըստ այդմ, կարելի է Հայկական Հայկ-Նեբրովթ առասպելական հակադրությունը համադրել շումերական Ասագ-Նինուրտա հակադրությանը: Թվում է, թե այս երկու առասպելները ծագում են նույն նախատիպից, միայն հակառակորդների դերերն են փոխված. շումերականում իրենց՝ հարավցի պատերազմի աստվածն է հաղթում Հյուսիսի կրակի դեմոնին, իսկ Հայկականում Հայոց նախնի (վերակազմության մեջ՝ ամպրոպի ու կրակի աստված) Հայկն է հաղթում հարավի առասպելական արքա Նեբրովթին (վերակազմության մեջ՝ Նինուրտա):

10. Հայաստանում և մերձակայքում Հայ ցեղանվան հետ համադրելի բազմաթիվ անվանումներ են հանդես գալիս արդեն ամենահնագուշտ սեպագիր շարժումներում, երբեմն կապված նաև Հայաստանին բնորոշ այլ ցեղատեղանուններ հիշեցնող ձևերի հետ (տես ստորև): Ըստ այդմ, հավանական է, որ Հայ ցեղանվան նախատիպը նույն հնչողությունն է ունեցել թերևս արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերին: Կարելի է ենթադրել, որ Հայ ձևը շատ հին է և միայն հետագայում է բաղադրվել վաղնջահայերենում նույն հնչողությունը ձևաբար \*poti-ի հետ:

Մարս մոլորակն էլ իր հրակարմիր դույնի պատճառով կապվել է հուրկրակի հետ (հմմտ. հուն. Πυροεις, Հայ. Հրատ): Այդ մոլորակի միջագետքյան աստված Ներգալն իր կրկնակ էրրայի հետ ևս, ինչպես տեսանք, առնչվում էր կրակին<sup>53</sup>: Հայկը, որպես «թուխ» Արամի «առաջին տիպար», սկզբնապես կարող էր նույնպես կապված լինել այրվելու գաղափարի հետ: Այս առնչությունը հմմտ. հնդեվրոպական \*Hā- (\*h<sub>2</sub>eH<sub>x</sub>-. առաջ վերականգնվում էր որպես \*ās-) «այրել, տաք լինել» արմատը, այդ ձևով պահ-

<sup>51</sup> W. H e i m e l. The Natural History of the Tigris according to the Sumerian Literary Composition Lugal. – "Journal of Near Eastern Studies". Vol. 46, 4 (1987), p. 312.

<sup>52</sup> Мифы народов мира. Т. 2, М., 1982, с. 218, 222. տես և Ա. Պ ե տ Ր ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 141–142:

<sup>53</sup> Այս առնչությամբ նշենք, որ Ներգալը խեթական ավանդության մեջ կապվում է Akni- աստծուն, որին համարում են փոխառված «միջագետքյան արիացիների» լեզվից, հմմտ. հնդ. Agni (թեր և դեմ կարծիքների վերաբերյալ տե՛ս օրինակ A. A r c h i. Il culto del focolare presso gli Ittiti. Studi Micenei ed Egeo-Anatolici, F. XVI, 1975, p. 14, ուսական գիտությունների մեջ՝ В. В. И в а н о в. Культ огня у хеттов. – "Древний мир". М., 1962, с. 272. И. М. Д ь я к о н о в. Архаические мифы Востока и Запада, с. 216): Հայկի առնչվող Ներգալի և էրրայի կապը կրակի հետ, այս համադրությունը կարող է դիտվել որպես այդ աստվածների նույնության հիմնավորում:

պանաված միայն պալայերենում՝ ha- «տաք լինել», ապա և տարբեր ածականներով ու ածանցներով՝ խեթ. hassa «օջախ, կրակի ղոհասեղան», has(s)- «մոխիր», հայ. այրել «վառել», ազաղել «չորացնել», ածին «մոխիր», ավեստ. atar- «կրակ», հին հնդ. asa «մոխիր», asita «սև, թուխ», լատ. āra «օջախ-ղոհասեղան», assus «խորոված», հին բարձր դերմ. asca, անգլ. ash «մոխիր», իռլ. aith «հնոց» և այլն<sup>54</sup>: Այս համատեքստում հայ և Հայկ ձևերի համար հնարավոր է պատկերացնել \*Ha-yo-, \*Ha-s-iyō-, \*Ha-to-, \*Ha-ti-, \*Ha-tiyo- նախաձևերը («այրող/այրված» և նման նշանակություններով):

Ասագի և Նինուրտայի առասպելն, ինչպես տեսանք, համադրելի է Հայկի և Իել-Նեբրովթի ավանդույթյան հետ: Ասագի նույնույթյան հասնող ընդհանրությունները հնդկական և հայկական «հուր» աստվածների, թշնամությունը շումերական աստվածների հետ և հայաստանյան տեղայնացումը թույլ են տալիս նրա անվան համար ևս հնդեվրոպական ծագում ենթադրել \**(H)ā-s-* արմատից: Այսինքն, հնարավոր է, որ Հայկի անունը հանգում է \**(H)ā-s-* արմատից ծագող այն տեղական անվանը (կամ անվան տարբերակին), որը Միջագետքում արտացոլվել է որպես շումեր. Ասագ, արքա. Աս/չակկու:

11. Հայկի վերաբերյալ ժողովրդական ավանդույթունները կարծես հաստատում են նրա անվան այս ստուգաբանությունը: Ըստ Նորենացու, Հայկը Իել-Նեբրովթի գիակը «պաճուճեալ դեղովք» հրամայում է տանել իր ոստանը՝ Հարք և թաղել «ի բարձրավանդակ տեղուջ, ի տեսիլ կանանց և որդուց իւրոց»: Սա իհարկե Նեմրութ (- Նեբրովթ) սարն է, Վանա լճի արևմտյան ափին, Հարքի հարավում, Մուշի դաշտի արևելքում: Այսպիսով, հայ ավանդույթյան մեջ Իելի հետ է կապվում ղոհաբերություն և թաղման առաջին ծեսը:

Ըստ մի լեգենդի, Բելը մեծ զորքով կռիվ է եկել Հայոց թագավորի (= Հայկ) վրա: Սա սպանել է Բելին, հանել Նեմրութ սարի գագաթը և այնտեղ թոնիր շինելով մեջը կախել՝ վառել է: Աստծու հրամանով կրակը ջուր է դառել, մոխիրը իջեցրել հողի տակ, որ քամին փոշին չտանի: Այլ տարբերակներում Նեմրութը մեծ շինություն է կառուցում Նեմրութ սարի վրա և ապստամբում աստծու դեմ՝ նետ է արձակում երկինք: Աստված մի ձուկ է հանում ծովից ու պահում նետի դեմ: Արյուն է հոսում երկնքից, և Նեմրութը կարծում է, թե սպանեց աստծուն: Բայց կայծակներ են իջնում երկնքից, և Նեմրութն իր շինությունը հանդերձ գետնասույղ է լինում, իսկ տեղում լիճ է առաջանում<sup>55</sup>: Այսպիսով, եթե Նորենացու հաղորդման մեջ

<sup>54</sup> Այս արմատի վերաբերյալ տե՛ս J. P. Mallory, D. Q. Adams. Նշվ. աշխ., էջ 32, 87, հմտ. A. Lubotsky. The PIE Word for 'Dry'. Zeitschrift für vergleichende Sprachforschung 98 (1985), № 1:

<sup>55</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում. Երևան 1969, էջ 72-73: Կան և համանման մուսուլմանական առասպելներ, ծագած միևնույն հինարևելյան ակունքներից, տե՛ս օրինակ Мифы народов мира. Т. 2, с. 219, 393: Ժ. Դյումեզիլը Նեմրութի լճի առաջացման լեգենդին համարյա նույնական մի լատինական առասպել է քննարկել, որտեղ կործանվող հերոսի անվան տարբերակներից մեկը՝ Արեմուլոս (կա նաև Թոմուլոս տարբերակը, որը Դյումեզիլը չի հիշում, տե՛ս Տիտոս Լիվիոս 1.3.9), համադրելի է Արամի հետ (G. Dumézil. Mythe et epos. T. III, Paris, 1973, p. 67-68): Այս առասպելի՝ Դյումեզիլի կողմից բերված հնդեվրոպական ղուդահանները ցույց են տալիս Նեմրութի հայկական լեգենդի հնդեվրոպական հիմքերը. մյուս կողմից, հայկական նյութն անբաժանելի է

Բելի մարմինը մոմհիացվում և թաղվում է, ապա ժողովրդական ավանդույթյան մեջ Բելը կայծակնահարվում և դիակիրգվում է:

Այստեղ լեռնագագաթի թոնիրը խորհրդանշում է հրաբուխը, համառ. Հայկական լեռնաշխարհի ամենաակտիվ հրաբխի Թոնիրակ (< Թոնիր-ակ) անվանումը: Նեմրուծը նույնպես ակտիվ հրաբուխ է եղել (վերջին արտաժայթքումները տեղի են ունեցել 1352 և 1441 թվականներին): Ավելին, Նեմրուծի հրաբխային խառնարանը ամենամեծն է Արևելյան կիսագնդում<sup>56</sup>: Հատկանշական է, որ Արդայոս լեռը, Արամ նահապետի վերջին, կարևոր ճակատամարտի վայրը ևս գործող հրաբուխ էր դեռևս Ստրաբոնի ժամանակ, որը վերսկսել է գործել 1882-ին: Արամի այս կռիվը համադրվում է Ջեսի և Տիփոնի առասպելին<sup>57</sup>, որը նույնպես կապվում է հրաբխի հետ՝ Տիփոնն ի վերջո թաղվում է էտնա հրաբխի տակ, որտեղ շարունակում է գոռալ և հուր արտաշնչել (Ապոլոդորոս 1.6.3):

Ըստ ժողովրդական պատկերացումների, Մուշի դաշտի հիմնական գետը՝ Մեղրագետը (հնում՝ Մեղ) սկիզբ է առնում Նեմրուծի կատարի լճից<sup>58</sup>: Գետի իրական ակունքի վերաբերյալ պատմում են հետևյալը: Այդտեղ առաջ թոնիր է եղել. իրիցկինը (տիրուհի) հաց թխելիս է լինում, երբ մի աղքատ խնդրում է հաց, հետո պանիր (գինի), ապա և համբույր՝ աստծու կամ Քրիստոսի սիրո համար: Տիրուհին համաձայնում է: Համբուրվելու պահին ներս է մտնում քահանան, և տիրուհին իրեն նետում է այրվող թոնիրը: Թոնիրը լցվում է մեղրահամ ջրով ու դառնում գետ, իսկ տիրուհին՝ ձուկ<sup>59</sup>:

Ուղղակի ակնհայտ է, որ Նեմրուծ լեռան և Մեղրագետի ակունքի այս լեգենդները ուշ բանահյուսական արձագանքներն են «հիմնական առասպելի», որտեղ աստված կայծակ-կրակով պատժում է իր հակառակորդին և/կամ իրեն դավաճանած կնոջը (աղագազրական համատեքստում այս լեգենդները պետք կապվեն նվիրագործության ջերմային ձեսի հետ, որն իրականացնում է մեծ աստծու երկրային ներկայացուցիչը): Ըստ ուսումնասիրողների, ձուկ դառնալու մոտիվը նույնացնում է այս լեգենդի իրիցկին-տիրուհուն սիրիական Դերկեսո դիցուհուն (վերջինս շարունակում է ավելի հին Ատարգատիս-Աստարտեին): Նա իբր հղիացել է մի քրմից և իր դուստր Շամիրամ-Սեմիրամիսին ծնելուց հետո իրեն լիճն է նետել ու վերածվել ձկան (Դիոդորոս 2.4.2-3)<sup>60</sup>: Ինքը, Շամիրամը իր մոր վիպական

հին միջագետքյան իրողություններից, այսինքն հայկական ավանդույթյան մեջ իրար են միահյուսվել հնդեվրոպական, միջագետքյան, քրիստոնեական և իսլամական բաղադրիչներ, տե՛ս Ա. Պետրոսյան. Արամի առասպելը..., էջ 137-142. А. Петросян. Նշվ. աշխ., էջ 64-65, 81-82. տե՛ս նաև Ս. Հարուստյան. Նշվ. աշխ. 225 հտն.:

<sup>56</sup> Տես Թ. Հակոբյան, Ս. Մելիք - Բախչյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 3. Երևան, 1991, էջ 976:

<sup>57</sup> J. M a r k w a r t. Die Entstehung und Wiederstellung der armenischer Nation. Berlin 1919. S. 66 ff.; Ն ու յ ի՝ Le herceau des Arméniens. - «Revue des études arméniennes», 8 (1928), f. 2, p. 215 seq.; А. Петросян. Նշվ. աշխ., էջ 49-51, 62-63.

<sup>58</sup> Գ. Սրվանձտյանց. Երկեր. հ. 1, Երևան, 1978, էջ 50: Ա. Ղանալանյան, Նշվ. աշխ., էջ 88-89:

<sup>59</sup> Այս լեգենդի տարբերակները պատմվում են այլուրեք, տե՛ս Ա. Ղանալանյան. Նշվ. աշխ., էջ 95, 98, 106:

<sup>60</sup> Այս սիրիական զուգահեռը առաջինը բերել է Գ. Խալաթյանը. տես Գ. А. Х а л а т ь я н ц. Общий очерк армянских сказок. М., 1985, с. 26. տե՛ս և Մ. Աբեղ-

կրկնորդն է, բայց մյուս կողմից, նա, որպես Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի թագուհի, շարունակում է տեղի մեծ աստվածուհու, որը հանդես է գալիս աքազական Իշտար կամ խուռիական Շաուշկա անուններով, կերպարը:

Հայկականին ավելի մոտ է հետևյալ գերմանական լեզենգր. Փրկիչը, անցնելով մի փոքի մոտից, հաց է խնդրում: Հացթուխը մերժում է, բայց նրա կինն ու վեց դուստրերը զաղտնի կատարում են խնդրանքը և, որպես պարզև, վերածվում Բազումք համաստեղութայն աստղերին: Նման պատկերացումների արձագանք է Բազումքի և Մեծ Արջի կելտական մի անվանումը՝ Crannarain («հաց թխելու բաժ»)՝<sup>61</sup>:

Բայց առավել խոսուեն են Օրիոն համաստեղութայն առաջացման առթիվ արդեն հիշված հնդկական առասպելները: Դակշա աստվածը, որը երբեմն նույնացվում է Պրաջապատիի հետ, Հիմավատ լեռան վրա, սրբազան Գանգեսի ակունքում կատարում է առաջին զոհաբերությունը: Նա հրավիրում է բոլոր աստվածներին, բացի իր դուստր Սատիի ամուսին Ռուդրայից: Այդ վիրավորանքից Սատին իրեն նետում է խարույկը և այրվում (այդ պատճառով Սատի են անվանվում իրենց ամուսինների դիակիզման խարույկների մեջ այրվող կանայք): Ռուդրան, կատարողութայն մեջ, պատժում է աստվածներին: Մի այլ տարբերակում, Պրաջապատին հանցավոր կապի մեջ է մտնում կամ հետապնդում իր դստերը, որի պատճառով էլ նետահարվում է Ռուդրայի կողմից: Այս առասպելներում Օրիոն համաստեղությունը Ռուդրայի կողմից նետահարված զոհաբերութայն եղջերուն է կամ հենց Պրաջապատին:

12. Բերված հայկական և հնդկական ավանդությունների կապն ընդհանուր ծագում է ակնարկում: Այստեղ էական է կրակի՝ այրվելու մոտիվը: Հատկանշական է, որ որոշ տեքստեր հիմք են տալիս Ռուդրային նույնացնել կրակի աստված Ագնիին՝<sup>62</sup>: Հայկական նախաքրիստոնեական դիցարանում սիրիական և միջագետքյան մայր աստվածուհուն համապատասխանում է Աստղիկը, որը և՛ անունով և՛ գործառույթով նման է քաղաղական Իշտարին (երկուն էլ սիրո ու մայրություն ղիցուհիներ են, Վեներա մոլորակի անձնավորումները)<sup>63</sup>: Ընդ որում, Իշտարի անունն ինքը հավանաբար ծագում է հնդեվրոպական \*Haster- «աստղ» արմատից (որից և Աստղիկ), որը նույնպես հանգեցվում է հիշյալ \*Hā-s- (\*h<sub>2</sub>el<sub>1</sub>s-) «այր(վ)ել» արմատին<sup>64</sup>: Աստարտեն էլ Իշտարի արևմտասեմական զուգահեռն է:

յ ա ն. Երկեր. հ. է, Երևան, 1975, էջ 163–165, հ. Ը, 1985, էջ 252–255: Ա. Մ ա տ ի կ - յ ա ն. Արա Գեղեցիկ. Վիեննա 1930, էջ 68 հտն.: Ն. Ա դ ո ն ց. Հին Հայոց աշխարհահայտը. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 246 հան.:

<sup>61</sup> R. A l l e n. Նշվ. աշխ., էջ 402: Նմանատիպ մի կովկասյան լեզենգ տե՛ս Կ. Ե. Բ. Գ. Երոիչեսկի Եպոս չեչենցեւ և Ինգուշեյ. Մ., 1972, ս. 130-131:

<sup>62</sup> K. K e r s h a w. Նշվ. աշխ., էջ 221, ծանոթ. 26:

<sup>63</sup> Աստղիկ-Ափրոդիտի նույնացումը Վեներայի հետ ակնհայտ է, տե՛ս օրինակ Մ. Ա բ ե դ յ ա ն. Երկեր. հ. է, էջ 37, 154 հտն.:

<sup>64</sup> S t u T. B. Գ ա մ կ ռ ե լ ձ շ Ե, B. B. Ի վ ա ո Վ. Ինդոեւրոպեյսկի Եզեկ և Ինդոեւրոպեյսկի. Եբիլիսի, 1984, ս. 875, քրիմ. 1, 967, հարցի հիմնավորմամբ, ուր ժխտվում է Ի. Մ. Դյակոնովի քննադատությունը. համատ. J. P. M a l l o r y, D. Q. A d - a m s. Նշվ. աշխ., էջ 87, 543: Այս առթիվ արժե նշել, որ Իշտարին համապատասխանող խուռիական ղիցուհու անունը՝ Saušal Sauska (ամպրոպի աստված Թեշուբի քույրն է)

Ակնհայտ է, որ Մեղրագետի լեզենդի տիրուհու կերպարն ի վերջո հան-  
 ցում է Աստղիկ դիցուհուն, որի պաշտամունքը կենտրոնացած էր Մեղրա-  
 գետի հովտում՝ Մուշի դաշտում: Կարելի է կարծել, լեզենդների հայոց թա-  
 գավոր՝ աստվածն ու երկնային ձուկը, ապա և երեցն ու իր կինը ներկա-  
 յացնում են բանահյուսական հիշողությունը Հայկի և Աստղիկի (վերա-  
 կաղմություն մեջ՝ ամուսիններ): Մարս և Վեներա մոլորակներն անձնավո-  
 ըրող աստվածները մի աստվածային ամուսնական զույգ են պատկերացվել  
 այլուրեք (օրինակ՝ Արես-Ափրոդիտե), և հատկանշական է, որ հայոց մեջ  
 այս մոլորակները կապվել են Հայկի և Աստղիկի հետ: Աստվածային ամ-  
 ուսնական դույզները հաճախ կոչվել են միևնույն արմատով. սա կարող է  
 նորից ակնարկել Հայկ դիցանվան, և այսպիսով՝ նաև հայ ցեղանվան առա-  
 ջարկված ստուգաբանությունը՝ <sup>65</sup> արմատից՝:

Ընդհանրապես, առասպելական առաջին արքան, կամ առաջին մարդը  
 հաճախ կապված է կրակի և կրակարանի հետ: Հնգական կրակի աստված  
 Ագնիից է սերում, իբր, մարդկությունը: Ագնիի մի անվանումն է Վիվաս-  
 վատ, որն իր հերթին մարդկային ցեղի նախնին է, կրակի առաջին ստացո-  
 դը և առաջին զոհ մատուցողը<sup>66</sup>: Որոշ տեքստեր հիմք են տալիս Ռուդրա-  
 յին նույնպես նույնացնել Ագնիին<sup>67</sup>: Այս տվյալներն ուղղակի նույնական  
 են Բելի դեմ կոչվող հայոց թագավորի, այսինքն՝ Հայկի, հայոց առաջին  
 նախնու լեզենդին, որը թոնրի կրակում այրելով Իելին, կատարում է առա-  
 ջին զոհաբերությունը:

Համադրելի է Հնդեվրոպական \*saus «չոր» արմատին, որը թերևս \*Hä-s-ի մի տարբերակն է  
 (\*saus-ի առթիվ տես A. L u b o t s k y. Նշվ. աշխ.): Թեոլոգի ցիկլի դիցանունների  
 Հնդեվրոպական ծագման վերաբերյալ տե՛ս A. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 53-54,  
 89): Իշտարի այս ստուգաբանության առթիվ պետք է նկատել, որ որոշ տեքստերում  
 շումերաքաղական Ինանա-Իշտարը նկարագրվում է ուղղակի որպես կրակ տես Յ. V.  
 K i n n i e r W i l s o n. Նշվ. աշխ., էջ 17-18: Իշտարի ազգակիցները սեմական ավան-  
 դույթներում Հանդես են գալիս և՛ որպես կին, և՛ որպես տղամարդ աստվածներ: Վերջին-  
 ներին Համապատասխանում է «Սասնա ծռերի» Պարոն Աստղիկը, որը երկնքից կրակ է  
 թափում Դավթի կամ Մհերի վրա (այս կերպարի մասին տես Սասնա ծռեր. Հ. Դ. Երևան,  
 1999, էջ 398): Այս առթիվ տես և Ա. Մ ա տ ի կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 99-100: Ա.  
 Պ ե տ ռ ո ս յ ա ն. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս. Հայոց սրբերը և սրբավայրերը.  
 Երևան, 2001, էջ 168-169): A. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 63-64:

<sup>65</sup> Առաջին նախնի-արքայի ու տոհմի նախահոր և այս արմատով կոչվող օջախի ու  
 կրակի այս կապը զուգահեռներ ունի նաև այլ Հնդեվրոպական ավանդույթներում, տե՛ս G.  
 N a g y. Նշվ. աշխ., էջ 143-179: Սա Համադրելի է նաև մի շարք լեզուներում օջախ,  
 ընտանիք և ժողովուրդ տերմինների նույնությունը կամ ստուգաբանական կապին, տե՛ս O.  
 A. K o n o t a n t i n o v a. К характеристике лексического комплекса очаг-  
 жилище-народ в основных алтайских языках. — “Sprache, Geschichte und Kultur der  
 altaischen Volker“. Berlin, 1974. Հետաքրքիր է նշել, որ հայ ցեղանվան ու Հայկ դիցանվան  
 նմանությունը Հայեացք, Հայեցուած չստուգաբանվող բառերին հիշեցնում է անգլ. look  
 «Հայացք, նայել» և հայ. լուցանեմ «այրել» բառերի ստուգաբանական կապը (առաս-  
 պելներում էական է ամպրոպի աստծու հայացքի մոտիվը, տե՛ս A. П е т р о с я н. Նշվ.  
 աշխ., էջ 67. նմանատիպ պատկերացումների արձագանք պետք է լինի նաև Անգեղ  
 դիցանվան ստուգաբանությունը, որի վերաբերյալ տես ստորև):

<sup>66</sup> Այս մասին տե՛ս G. N a g y. Նշվ. աշխ., էջ 104, 110-111, 146-149:

<sup>67</sup> Մի շարք հիմներում Ռուդրան Հանդես է գալիս որպես Ագնիի ugra «սարսափելի,  
 դժնյա» ձևը, որը երկնքում այրվում է «Հազար արևների նման». դիակիզման ծեսի ժամա-  
 նակ ոգեկոչվող Ագնին էլ Հավանաբար Ռուդրայի մի ձևն է, տե՛ս K. K e r s h a w. Նշվ.  
 աշխ., էջ 100, ծանոթ. 61, 221, ծանոթ. 26:

13. Հին սեմական ժողովուրդների պատկերացումներում Հայաստանի Հարավը և նրա լեռները համարվել են «մթուժյան» կամ «գիշերվա» երկիր և լեռներ, տեղայնացած դրախտի կամ անմահության երկրի ճանապարհին: Որսյես արևմտասեմական (ուղարիտյան-քանանական) գլխավոր աստված էլի բնակավայր և աստվածների հավաքատեղի, հիշվում է երկու տեղ՝ մեկը Սիրիայում, իսկ մյուսը՝ Հայաստանի «մթուժյան/գիշերվա» լեռներն են<sup>68</sup>: Մի ուշ խեթական աղբյուրում պահպանված քանանական առասպելում մեծ աստված El-kunirsa-ն ապրում է Mala գետի, այսինքն Եփրատի ակունքներում<sup>69</sup> (էլ-կունիրսա անունը խեթական հաղորդումն է սեմական էլ աստծու և նրա մակդիրի՝ 'ēl qūnī ['a]rsa «երկրի արարիչ էլ»<sup>70</sup>: Մալա անվան համար հմմտ. հնդեվրոպական \*mel- «սև», գետի հունարեն անվանումն է Melas, թուրքերեն՝ Կարասու «Սև ջուր»: այս մասին տե՛ս և ստորև): Հրեական լեգենդներում Հայաստան՝ մթին լեռներն է գալիս Ալեքսանդր Մեծն անմահության ուղիներ<sup>71</sup>: Ալեքսանդրի սիրիական վեպում մինչ «մթուժյան երկիրը», հերոսը հասնում է Մասիս անունով սարին (սա, թեև համահունչ է Այրարատի Մասիսին, բայց կարող է տեղայնացվել նաև Հայաստանի Հարավում, տե՛ս ստորև): Ենթադր, դրախտի ճանապարհին, հասնում է մի մութ տեղ և տեսնում մթուժյան լեռները<sup>72</sup>:

Այս պատկերացումների հնադուրյն տարբերակը ներկայացված է աքադական «Գիլգամեշ» էպոսում, որտեղ հերոսն անմահության ուղիներին հասնում է Masu «երկվորյակ» լեռանը, հետո տասներկու անցում կատարում համատարած մթուժյան միջով, հասնելու համար Ուտնապիշտիմին, աստվածաշնչյան Նոյի հին միջագետքյան նախորդին, որը փրկվել էր ջրհեղեղից և անմահության ձեռք բերելով ընդունվել աստվածների հավաքույթ<sup>73</sup>: «Մթուժյան/ գիշերվա» լեռները նույնացվում են տարբեր ժամանակներում և աղբյուրներում Նիբուր, Արաբադ, Սարարադ, Կորդվաց լեռ, Ջուդի անուններով հիշվող երկգագաթ լեռան հետ (Մեծ Հայքի ծայր Հարավային Կործայք նահանգում, Կորդվաց լեռների արևելքում): Այս լեռը սիրական, արաբական և հայկական լեգենդներում հիշվում է որպես Նոյյան տապանի հանգրվան<sup>74</sup>: Աքադական Մաշուն էլ ակնհայտորեն համարելի է Կորդվաց լեռից արևմուտք գտնվող հունական և լատինական աղբյուրների Μάσιον ὄρος/ Mons Masius (հետագայում՝ Tur-'abdin) լեռների հետ: Այս շրջանը փաստորեն սլատկերացվել է որսյես մուտքը երկրա-

<sup>68</sup> E. L i p i n s k i. Mythological Traditions Related to Mount Hermon and to the Mountains of Armenia. – "Orientalia Lovaniensia Periodica", 1971, № 2, p. 41–58.

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 56–57:

<sup>70</sup> П. Ш. Ш и ф м а н. Культура древнего Угарита. М., 1987, с. 146.

<sup>71</sup> E. L i p i n s k i. Նշվ. աշխ., էջ 43–46:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 47–48. Ալեքսանդրի «մութ աշխարհից» անմահական ջուր բերելու մասին մի հայկական լեգենդ տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Նշվ. աշխ. էջ 281:

<sup>73</sup> E. L i p i n s k i. Նշվ. աշխ., էջ 49:

<sup>74</sup> Սեմական աղբյուրների վերաբերյալ տե՛ս E. L i p i n s k i. Նշվ. աշխ., էջ 52–53, հայկական լեգենդները՝ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 370–371: Նոյյան տապանի լեռան տարբեր տեղայնացումների վերաբերյալ՝ Վ. Վ. Ի ն գ լ ի ղ յ ա ն. Հայաստան սուրբ գրքի մեջ. Վիեննա, 1947, էջ 5–175:

յին դրախտի, որն ըստ Աստվածաշնչի, տեղայնացվել է Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի ու Տիգրիսի ակունքներում<sup>75</sup>:

14. Հայկը, Բարելունից գնալով Հյուսիս «յերկիրն Արարադայ», հանգրվանում է մի լեռան ստորոտում: Հետո նա այս երկիրը թողնում է իր Կադմոս թոռանը (որն այդպիսով հանդես է գալիս որպես այդ շրջանի էպոնիմ), և շարժվելով «ընդ արևմուտս հիւսիսոյ», հաստատվում վանա լճի Հյուսիսային Հարթ գավառում (Խորենացի Ա.ժ. Սեբեոս Ա):

Այս լեռան ստորոտն, իհարկե, ասորեստանյան աղբյուրների Kadmuhi/ Katmuhu/ Kutmuhi, հայ. Կադմեայ տուն երկիրն է Հայաստանի ծայր հարավում, որից հարավ ձգվում է Մասիոն-Տուրաբդին լեռնաշղթան: Բայց, քանի որ Հայկը Հարթ հասնելու համար իր հանգրվանից շարժվում է դեպի Հյուսիս-արևմուտք, ապա այդ լեռը պետք է տեղայնացվի Տուրաբդինից արևելք, որտեղ և Կորդվաց լեռն է՝ ասորեստանյան աղբյուրներում այն հանդես է դալիս որպես Կադմուսի արևելյան սահմանը<sup>76</sup>: Էական է, որ, ըստ Խորենացու (Ա.ժ), Նոյի որդի Սեմը ևս նույն շրջան (Տարոն) է գալիս շարժվելով «ընդ արևմուտս հիւսիսոյ», և Հայկը փաստորեն կրկնում է Սեմի երթուղին: Այսպիսով, կարելի է ասել, որ Հայկի առաջին հանգրվանն էր ջրհեղեղի առասպելի Արարատ-Նիբուր-Կորդվաց լեռը, որը եթե ոչ իրական, ապա առասպելաբանական աշխարհագրություն մեջ համարելի է աքաղական էպոսի Մաշու, ապա և Կորդվաց լեռներից արևմուտք ընկած Մասիոն-Տուրաբդին լեռներին: Ստորև կդիտվեն այդ լեռների հետ կապված որոշ առասպելներ:

ա) Ըստ հայ ավանդության, այստեղ է հանգրվանել հայոց նախնի Հայկը, վերակազմության մեջ ամպրոպի աստված: Հայկի երեք որդիները՝ Արամանյակը, Խոռն ու Մանավաղը դառնում են Հայաստանի որոշ տարածքների էպոնիմներ:

բ) Ըստ Աստվածաշնչի, ապա և տեղական լեգենդների, այստեղ է հանգրվանել Նոյն իր տապանով: Նոյի երեք որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը հանդես են գալիս որպես մարդկության տարբեր հատվածների էպոնիմներ: Նոյի ավանդությունը Խորենացու մոտ (Ա.զ) պատմվում է Քսիստոթրեսի մասին, որի անունը, հունական միջնորդությամբ, ծագում է Նոյի շումերական նախատիպից՝ Զիուսուդրայից:

գ) Ուրարտական դարաշրջանում այստեղ Կումե/Կումենու կրկիրն էր՝ Ուրարտուի երկրորդ մեծ աստված ամպրոպային Թեյշեբայի պաշտամունքի կենտրոնը: Այս երկրի «արքայական քաղաքն» էր Կիբջան, Նիբուր

<sup>75</sup> E. Lipinski. Նշվ. աշխ., էջ 53–54: Ի միջի այլոց, այս պատկերացումներին համահունչ են հին հունական սվյալները Այս երկրի վերաբերյալ, որը (դրախտային) անդրաշխարհն է, տեղայնացված Հայկական լեռնաշխարհի Հյուսիսարևմուտքում՝ Եփրատի վերին հոսանքներում (Հայասա, Կոլխիդա), տե՛ս Ю. В. Андреев. Поэзия мифа и проза истории. Л., 1990, с. 164–165: Ա. Պետրոսյան. Արամի առասպելը..., էջ 89–93:

<sup>76</sup> Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 98–99. Կադմուսի վերաբերյալ տե՛ս Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie (այսուհետև՝ RLA). B. V. S. 487–488.

(Կորդվաց) լեռան սուր բարձունքներից մեկի վրա (լեռը երկգագաթ է, բայց հիշվում են մի շարք քաղաքներ դրա բարձունքներում)<sup>77</sup>:

դ) Ուգարիտյան մի առասպելաբանական տեքստում (մ.թ.ա. XIV-XIII դդ.) որպես անդրաշխարհի մուտք հիշվում են Targhu/izziza և Sharrumagi երկվորյակ դագաթները, որոնք նույնացվում են աքադ. Masu-ին և Հայ. Մասիսին: Ակնհայտ է այս անունների կապն անատոլիական ամպրոպի աստված Tarhu-ի և լեռների աստված Sarruma-ի հետ<sup>78</sup> (վերջինս խեթախուռիական ավանդույթում հանդես է գալիս որպես Թեշուբի որդի): Այս ուգարիտյան անվանումները կարող են համադրվել ասորեստանյան տեքստերում նիբուր լեռան դագաթների վրա հիշվող Kibsa և Sarum քաղաքներին, որոնցից առաջինը որպես Կուսե(նու)ի «արքայական քաղաք», պետք է լիներ ամպրոպի աստծու պաշտամունքի հիմնական կենտրոնը<sup>79</sup>:

<sup>77</sup> Տե՛ս օրինակ H. B. A p y u t y o n y a n. Նշվ. աշխ., էջ 150-151: Հայկի առաջին Հանգրվանելն այստեղ է որոշ այլ մանրամասներ թույլ են տվել համադրել Հայկի և Թեշուբայի կերպարները (Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ.): Հատկանշական է, որ սիրիականատոլիական ամպրոպի աստվածը (Բաալ/Թեշուբ) պատկերվել է կանգնած երկու աստվածացված լեռների վրա (M. D i j k s t r a. The Weather God on Two Mountains. Ugarit forschungen 23 /1991/), և Թեշուբի զուգորդ Թեշուբան էլ կարող էր պատկերացվել կանգնած նիբուր լեռան երկու գագաթների վրա: Հայ վիպական բանահյուսության հնագույն ակունքների բացահայտման տեսակետից հետաքրքիր է նշել, որ երկու լեռան վրա կանգնած Հերոսը պահպանվել է Վասակ Մամիկոնյանի վիպական կերպարում (Փավստոս Դ.ձգ):

<sup>78</sup> T. G a s t e r. Thespis. Ritual, Myth, and Drama in the Ancient Near East. New York, 1975, p. 197-199, n. XVIIIc (տառադարձումները հեղինակին են. այս անունները տառադարձվել են նաև որպես Targhuzizza և Tharumegi, տե՛ս Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, p. 35): Այս առթիվ տես և E. L i p i n s k i. Նշվ. աշխ., էջ 43 Հտն.: Նշենք, որ արևմտյան հեղինակները Նոյյան Հանգրվանը տեղայնացնելով Հայաստանում որպես Մասիս, երբեմն չեն տարբերակում Կորդվաց լեռը Այրարատի Մասիսից: Հայկական միջնադարյան աղբյուրների և լեգենդների քննության հիման վրա ենթադրվում է, որ Նոյի Հանգրվանը համարվող լեռը նույնացվել է Այրարատի Մասիսի հետ XI-XII դդ. (տես օրինակ Վ. Ի ն Կ լ ի ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 27 Հտն.: Ինչևիցե, Այրարատի լեռան արդեն I դ. ավանդված Մասիս անունն անբաժանելի է Մասիոն-Մասիուսից (նորենացու բերած նախաքրիստոնեական ավանդույթյան մեջ Արտաշես թագավորի անեծքում Մասիսի հիշատակությունը ցույց է տալիս, որ լեռն այդպես է կոչվել V դ. ավելի վաղ, իսկ Ալեքսանդրի սիրիական վեպի նշված Մասիսն էլ հուշում է, որ Հայերն այդպես կարող էին անվանել նաև Հարավային լեռները): Մասիոն/Մասիուս/Մասիս ձևերը կարող էին ծագել օրինակ, Հին աքադ. Masu-ի ասուր. Masu արտասանաձևից, տեղանուններին բնորոշ հնդ-եվրոպական \*-iyos-/iya ածանցով (որի նախորդ ձայնավորը կանոնավոր կերպով ընկնում է)՝ \*Masiyos > լատ. Masius, \*Masiya > Հայ. Masi-, հոգնակի ուղղական Մասիք, սեռ. Մասեաց, Հայց. Մասիս: Նկատենք, որ Նոյի ավանդույթյան հետ կապվող տարբեր սարեր Հայաստանում կոչվել են այս անունով՝ Մասիոն-Մասիուս, Մասիս, Նեխ Մասիք (= Սիփան. այս լեռան մասին և Նոյի ավանդույթյան առնչությամբ տես Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 26): Ընդ որում, Մասիսը նույնպես երկգագաթ է և կոչվել է նաև «Սև սար» ու «Մութն աշխարհ» (Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, Հ. Ա, էջ 136, Հ. Ը, էջ 185 Հտն.), որը համահունչ է Māšū «երկվորյակ» և «մթուճյան լեռների» հետ: Ի միջի այլոց, որ Հայկական լեռնաշխարհի երկրորդ ամենաբարձր լեռան՝ Նեխ Մասիք-Սիփանի Միպան անվանաձևը համադրելի է արևմտասեմական Բաալ աստծու սրբազան սար Sapanu-ին, որը կարող է հաստատել նաև Մասիսի Հին սեմական ծագումը: Այս Հարցերի շուրջը տե՛ս A. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 21-22: Մաշու լեռնանվան և այդ լեռան հետ կապված պատկերացումների տեղաշարժը դեպի Հյուսիս թերևս կարող է վկայել նաև Հյուսիսային Կովկասի Մաշուկ լեռը, որի վերաբերյալ կա Մասիսում փակված Արտավազդի առասպելը հիշեցնող մի լեգենդ (այս լեռան ավանդույթունները տե՛ս Кабардинский фольклор. М. - Л., 1936, с. 602):

<sup>79</sup> Այս քաղաքների տեղայնացման վերաբերյալ տե՛ս H. B. A p y u t y o n y a n. Նշվ. աշխ., էջ 108, 239-240:

ե) Որոշ հանգամանքներ թույլ են տալիս այս առասպելների հիմքերը հասցնել մինչև պատմական ամենահնագույն շումերական դարաշրջանը: Կորդվաց լեռան ասորեստանյան անվանումը՝ Նիրուր-Նիպուր համապատասխանում է շումերական մեծ աստված Էնլիլի պաշտամունքի կենտրոնի Նիպուր անվանը: Էնլիլը որոշ առումներով համադրելի է ամպրոպի ու փոթորկի աստվածներին՝ նա կոչվում է LUGAL.A.M.A.RU «փոթորկի արքա»: Էնլիլը կապված է նաև լեռան և ջրհեղեղի հետ: Նրա հիմնական մականուններից մեկն էր KUR.GAL «մեծ լեռ», և նրա Նիպուրի տաճարը կոչվում էր E.KUR «լեռան տուն», իսկ ջրհեղեղի առասպելներում նրա ցասումն է, որը սպառնում է կործանել մարդկությունը<sup>80</sup>: «Էնլիլ և Նինլիլ» առասպելում Նինլիլ դիցուհին հետևում է անգրաշխարհ ուղևորվող Էնլիլին: Ծանապարհին Էնլիլը հղիացնում է Նինլիլին երեք անգրաշխարհիկ աստվածներով (Ներգալ, Նինադու, Էնբիլուլու)<sup>81</sup>:

15. Շումերաաքաղական, անատոլիական, իուռաուրարտական, արևմտասեմական և հայկական առասպելների կենտրոնացումը միևնույն լեռան՝ Նիրուր-Արարատի շուրջը հուշում է, որ այս շրջանը, բացի հզոր առասպելաբանական ավանդույթի կենտրոն լինելուց, եղել է նաև տարբեր մշակույթների հանդիպումների և այսպիսով էթնիկական հնագույն շփումների մի վայր: Ընդ որում, տարբեր կերպարների համադրությունը հիմք է տալիս դրանց ֆունկցիոնալ համապատասխանեցման համար:

Այս համապատասխանությունը հուշում է հայոց նախահայր Հայկի ու նրա երեք որդիների և աստվածաշնչյան ավանդության մեջ՝ մարդկության նախահայր Նոյի ու նրա երեք որդիների համապատասխանությունը: Մարդկության ծագումն է ակնարկում նաև Հայկի թոռ Կադմոսի՝ այս տարածքների էպոնիմի անունը, որը համապատասխանում է հուդայականության միստիկական ավանդույթի առաջնամարդուն՝ 'Adām qadmōn-ին<sup>82</sup>:

Այսպիսով, միջագետքյան և արևմտասեմական մարդածնության առասպելը տեղայնացվել է Հայաստանի հարավի «երկվորյակ» լեռան շրջանում, անդրաշխարհի մուտքի մոտ: Ընդ որում, երկվորյակ դադաթներից գոնե Targhu/izziza-ի անունը, կապված անատոլիական ամպրոպի աստծու համահունչ անվանը, պարզորոշ հնդեվրոպական է՝ \*terH- (\*terh<sub>2</sub>-) «անցնել, հաղթել» արմատից<sup>83</sup>: Խուռաուրարտական Թեշուր-Թեշերայի անունն էլ

<sup>80</sup> G. L e i c k. Նշվ. աշխ., էջ 46:

<sup>81</sup> Նույն տեղում, էջ 47-48:

<sup>82</sup> Այս կերպարի և հնդիրանական ավանդույթի առաջնամարդու հետ նրա առնչությունների վերաբերյալ տե՛ս Мифы народов мира. Т. 1, с. 43-44: Հայ. Կադմոսը համապատասխանում է հուն. Կադմոսին, որի անունը ևս պետք է կապվի արևմտասեմական qdm «առաջ, հին, արևելք» արմատին, տե՛ս Ա. Պ ե տ Ր ո ս Յ ա ն. Արամի առասպելը..., էջ 154-156:

<sup>83</sup> С. Л. Н и к о л а е в, А. Б. С т р а х о в. К названию бога громовержца в индоевропейских языках. — «Балто-славянские исследования», 1985, М., 1987, с. 149-153; С. W a t k i n s. How to Kill a Dragon. New York, Oxford, p. 343-346; i d e m. A Celtic Miscellany. — In: "Proceedings of the Tenth Annual UCLA Indo-European Conference". Journal of Indo-European Monograph N 32, Washington, 1999, p. 12-14.

պետք է փոխառված լիներ հնդեվրոպական մի լեզվից<sup>84</sup>։ այդ աստվածը հիշվում է արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակից։ Կումե(նու)ն էլ թերևս նրա հնադույն կենտրոնն էր<sup>85</sup>։ Սա թույլ է տալիս հնդեվրոպական ներկայություն ենթադրել այս շրջանում արդեն ամենավաղ ժամանակներից։ Այդ դեպքում այստեղ պետք է համադրվեին մարդածնություն հին առաջավորարևելյան և հնդեվրոպական առասպելները։

16. Ըստ Բ. Լինկոլնի, հնդեվրոպական մարդածնություն («արարչագործություն») կենտրոնական կերպարները կոչվել են «Մարգ» և «Երկվորյակ» (սովորաբար \*manu- և \*yemo-<sup>86</sup>)։ Նրանք ի հայտ են գալիս ժամանակի սկզբում, մի ցի հետ։ «Մարգը», որը ներկայացվում է որպես քուրմ, գոհում է իր եղբայր «Երկվորյակին» և ցուլը, որոնց մարմինների մասերից էլ կերտվում է մարդկային եռամաս հասարակությունը (այն կարող է կապվել նաև «առաջնամարդու» երեք որդիների հետ) և նյութական տիեզերքը։

Փոքր Ասիայի, ապա և Հայաստանի հարավով ձգվող լեռնաշղթաները հնուց ի վեր կոչվել են Տավրոս (հմտ. հուն. ταῦρος «ցուլ», ապա և հնդեվրոպական նույնիմաստ \*tauros-, սեմ. tawr-)։ Տավրոսի լեռնաշղթան գոնե արդեն իսթական ժամանակներից համադրվել է ցի հետ<sup>87</sup>։ Հայոց մեջ էլ Ցուլ է անվանվել Հայկական Տավրոսի՝ Վահագնի սրբավայրից հարավ գտնվող հատվածը (Փավստոս Գ.ժդ)։ Ցուլը հին առաջավորարևելյան և հնդեվրոպական ժողովուրդների մոտ հանդես է գալիս որպես ամպրոպի աստծու սիմվոլ<sup>88</sup> (հմտ. Թեշուբի և Թեյշեբայի պաշտամունքի կենտրոնացումը Կիլիկյան և Հայկական Տավրոսներում)։

Հայկական լեռնաշխարհի հարավում մարդածնություն հնդեվրոպական և սեմական առասպելների համադրման ժամանակ \*yemo-ն կարող էր համապատասխանեցվել Masu «երկվորյակ» լեռանը։ Հովսեպոս Փլավիոսը (Հրեական Հնախոսություն, 1.95), պատմելով ջրհեղեղի լեռան մասին, հիշում է, որ ըստ Նիկողայոս Դամասկոսցու, այդ լեռը գտնվում է Մինյուլաս (Μινύας = Minüas < Minuas) երկրից վեր, այսինքն՝ հյուսիս։ Հետաքրքիր է, որ ջրհեղեղի հնդկական առասպելում Նոյին համապատասխանում է մարդկության նախահայր Մանուն («մարդ»։ այն նույն կերպարն է, որի հիման վրա վերականգնվում է \*manu-ի և \*yemo-ի առասպելը)։ Ընդ որում, շեշտվում է, որ նրա փրկություն լեռը գտնվում էր հյուսիսում (Շատապատհա Բրահմանա, I.8.1)։

Մինյուլաս անվանումը կարող է համապատասխանեցվել մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջի շումերական մի աղբյուրում հիշվող Մենուա լեռնե-

<sup>84</sup> Ա. Պետրոսյան. Ուրարտուի գլխավոր աստվածների եռյակը..., էջ 251-253. A. Петросян. Նշվ. աշխ., էջ 54:

<sup>85</sup> Г. Вильхельм. Древний народ хурриты. М., 1992, с. 88-89.

<sup>86</sup> Sб'ս հատկապես B. L i n c o l n. Priests, Warriors, and Cattle. Berkeley, Los Angeles, London, 1986, p. 69-95, ապա և հեղինակի այլ աշխատություններն այդ թեմայով։

<sup>87</sup> Sб'ս B. B. И в а н о в. Луна упавшая с неба: древняя литература Малой Азии. М., 1977, էջ 84, ն ն ն ն ն Դ ա մ ա ս կ ո ս ց ի. Դիոնիսիակա 1. 408-409. С. W a t k i n s. Նշվ. աշխ., էջ 451:

<sup>88</sup> Sб'ս որինակ Мифы народов мира, т. 1, с. 203:

րին<sup>89</sup>, որոնք, ըստ Ա. Կիֆիչինի, տեղայնացվում են քննարկվող տարածքներում<sup>90</sup>: Այսպիսով, հնարավոր է կարծել, որ մարդածնության հնդեվրոպական առասպելի հետքերն այս շրջանում ի հայտ են գալիս արգեն մ.թ.ա. երրորդ հազարամյակից:

17. Ուշ խեթական աղբյուրում պահպանված, արդեն հիշված քանանական առասպելում արևմտասեմական մեծ աստված էլ-կունիրսան ապրում է Եփրատ-Մալա «սև» գետի ափունքներում: Եփրատի վերին հոսանքների երկիրը, մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերից, խեթական աղբյուրներում կոչվում էր Հայասա, որն, ըստ բազմաթիվ մասնագետների (Գ. Ղափանցյան, Բ. Պիտրովսկի, Ս. Երեմյան, Գ. Ջահուկյան, Վ. Իվանով և այլք), կապված է հայ ցեղանվան<sup>91</sup>, և այսպիսով, հնարավոր է, նաև Հայոց էպոնիմ Հայկի անվան հետ: Ուղղակի ակնհայտ է, որ էլ-կունիրսան այստեղ պետք է նույնացվի Հայասայի մեծ աստծուն:

Հայասայի աստվածների ցանկը գլխավորում են դերտգուլյն աստվածն ու մեծ մայր աստվածուհին, ներկայացված գաղափարագիր անուններով՝ [P.U.G]JUR <sup>URU</sup>Hayasa <sup>D</sup>INANNA <sup>URU</sup>Patteu[...] «Հայասա քաղաքի (երկրի) U.GUR աստվածը, Պատտեու...[ընջված է] քաղաքի INANNA աստվածը» (KUB XXVI, 39, IV, 26)<sup>92</sup>: Սրանցից հետո մեկ տող բաց է թողնված ի նշան Հաջորդ տասներկու պաշտամունքների ստորագաս դիրքի: U.GUR-ն արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսից ներկայացրել է հին միջագետքյան պատերազմի և անդրաշխարհի աստված Ներգալին<sup>93</sup>, իսկ INANNA-ն մայր աստվածուհու շումերոգրամն է (= աքադ. Իշտար):

<sup>89</sup> Այս լեռների վերաբերյալ աղբյուրը տե՛ս G. A. B u r t o n. The Royal Inscriptions of Sumer and Akkad. New Haven, 1929, p. 184-185. Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, p. 269:

<sup>90</sup> А. К и ф и ш и н. Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н. э.). — „Палестинский сборник“, 13 (76), 1965, с. 65 сл. Մյուս կողմից Մինյուսա երկրանունը նույնական է հին Հունաստանում որպես մի լեգենդար ցեղ հիշվող մինյուսացիների էպոնիմի (Օրբոմենոս քաղաքի արքան է, արգոնավորների նախահայրը), ապա և ուրարտական Մինուս արքայի անուններին: Գարծիք կա, որ ուրարտ. Մինուս ձևը ստուգաբանորեն համապատասխանում է Կրետի առասպելական Մինոս արքայի անվանը, իսկ վերջինս էլ համադրվել է հիշյալ «մարդ» \*manu-ի հետ (< \*men- «մտածել». ընդհանրապես, «մարդ» անունը շատ բնորոշ է ցեղի նախահայր և անվանադիր կերպարներին, և, չնայած հնչյունաբանական որոշ դժվարություններին, Մինոսի այս ստուգաբանությունը մնում է որպես հավանականներից մեկը, տե՛ս B. L i n - c o l n. Death, War, and Sacrifice. Chicago, London, 1991, p. 40, 47, n. 69): Հետաքրքիր է նշել, որ ելնելով Ալամ- և Մինուս հնագույն տեղանունների տեղայնացումից Հայաստանի հարավում, այդ ձևերը համադրվել են ուրարտական Արամու և Մինուս արքայանունների հետ, տե՛ս А. К и ф и ш и н. Указ. раб., с. 66. Ա. Պ ե տ ը ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 96, 98-100, 156, 163: А. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 194-199:

<sup>91</sup> Տե՛ս Հատկապես Գ. А. Капаян. Хайаса — колыбель армян. Ереван, 1948. Գ. Б. Д ж а у к я н. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964; о н ж е. О соотношении хайасского и армянского языков. — ИФЖ, 1988, № 1, 2: Վերջին տասնամյակներում հարցին իրադեկ մասնագետներից այս կարծիքին դեմ էր միայն Ի. Դյակոնովը:

<sup>92</sup> Տե՛ս Սի հրատարակությունները տե՛ս E. F o r t e r. Hajasa-Azzi. Caucasica. Fasc. 9, S. 6, ն. Ա գ ո ն ց. Հայաստանի պատմություն. Երևան 1972, էջ 46-47, Գ. А. Капаян. Историко-лингвистические работы. Т. 1. Ереван, 1956, с. 88. В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции хеттской империи. Ереван, 1971, с. 148:

<sup>93</sup> RLA. B. IX, 3/4, S. 215. V. H a a s. Geschichte der hettitischen Religion. Leiden, New York, Köln 1994, S. 367.

Եփրատի վերին հոսանքների այս շրջանը հետագա Մեծ Հայքի հյուսիսարևմտյան ծայրամասն էր, բայց և ամենակարևոր կրոնական կենտրոնը (հնում՝ Փոքր Հայքի կազմում): Այստեղ էին գտնվում գերագույն աստված Արամազդի, նրա կին Անահիտի, ապա և Միհրի, Բարշամինի ու Նանեի գլխավոր տաճարները, որը Հայաստան-Հայք ժառանգորդության ամենաէական կոմպաններից մեկն է: U.GUR-İNANNA և Արամազդ-Անահիտ զույգերի համապատասխանությունն ակնհայտ է:

Էլ-կունիրսայի տեղայնացումը Մալա գետի (Եփրատ) վերին հոսանքներում սեմական այն առասպելներից է, որոնք Հայկական լեռնաշխարհում են տեղայնացնում դրախտը, սև/մուր լեռը և անգրաշխարհի մուտքը<sup>94</sup>: Մալա-Մելաս-Կարասու գետանունն, ինչպես ասվեց, կապված է «սևի» հետ: Հատկանշական է, որ «սևի» հետ կապը բնորոշ է նաև Արամազդի պաշտամունքի շրջանի տեղանքին: Այսպես, նրա պաշտամունքի կենտրոն կամախ ավանը գտնվում է Եփրատի ափին մի սև լեռան վրա<sup>95</sup>. ավելին, այս տարածքներում խեթական դարաշրջանում հիշվում է Դանկուվա «Մուր/մուգ» երկիրը<sup>96</sup>, իսկ հայ անվանաբանություն մեջ՝ Մթին լեռը<sup>97</sup>:

Բերված նյութը հեռուն գնացող համագրությունների հնարավորություններ է տալիս: Մի կողմից՝ Հայկի, իսկ մյուսից՝ Հայասայի մեծ աստծուն ունյնացումը ներգալին պատահական չէ (պետք է նկատել, որ ներգալը նշանակալի դեր է կատարել նաև խուռիական գիցարաններում): Ուշագրավ է նաև Հայկի և ներգալի ևս մեկ ընդհանուր բնութագիրը՝ ներգալի սիմվոլիկ գեներերից էին լայն աղեղն ու նետը<sup>98</sup> (համտ Հայկի «լայնալիճ» աղեղն ու «երեթթեան» նետը): Սա հնարավորություն է տալիս Հայկին համադրել Հայասայի աստվածների նահապետին՝ Ուգուր-Ներգալին (պարզ է նաև Հայկ-Արամազդ ֆունկցիոնալ համապատասխանությունը): Ուգուր-Ներգալի չարձանագրված հայասական անունն այսպիսով կարող էր լինել Հայկի նախատիպը, որը որպես Հայասայի մեծ աստված, նաև երկրի էպոնիմն էր:

Հիշյալ արևմտասեմական առասպելում էլ-կունիրսայի կին Ասերտուն սիրո առաջարկություն է անում էլ-կունիրսայի որդուն (Բա'ալ), որը մերժում է նրան և գալիս Եփրատի ակունքների շրջանը՝ հոր բնակավայրը, պատմելու այդ գավաճանություն մասին: Էլ-կունիրսան առաջարկում է որդուն սեռական կապի մեջ մտնելով պատժել կնոջը (առասպելը հատվածաբար է պահպանվել և հաջորդ դրվագները լրիվ հասկանալի չեն)<sup>99</sup>: Սա որոշակիորեն համապատասխանում է Հայկի առնչությանը քննված Մեղրագետի ակունքի լեգենդին՝ երկու սյուլթեններն էլ ծագում են գիցարանա-

<sup>94</sup> E. L i p i n s k i. Նշվ. աշխ., էջ 56:

<sup>95</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1988, էջ 913:

<sup>96</sup> B. H. X a ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 54-55:

<sup>97</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., հ. 3, 1991, էջ 813-814:

<sup>98</sup> RLA. B. IX, S. 222.

<sup>99</sup> Առասպելի պահպանված հատվածների թարգմանությունը տե՛ս Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, p. 519. H. A. H o f f n e r. Hittite Myths. Atlanta, 1990, p. 69-70:

կան նույն նախատիպից (աստված պատժում է իրեն դավաճանելու փորձ արած կնոջը): Մեղրագետը՝ Արածանիի վտակը, Եփրատի ակունքներից մեկն է: Հատկանշական է, որ Մեղրագետի հին անվանումն է Մեղ, որը ստուգաբանորեն ուղղակի նույնական է Մալա-Մելաս-Եփրատին (հնգեվորոպական \*mel- «սև»): նույնական են նաև այդ գետերի թուրքական անվանումները (Karasu «Սև ջուր»):

18. Ինչպես ասվեց, Ներգալը հայոց մեջ նույնացվել է որպես, մի կողմից, Անգեղ, իսկ մյուսից՝ Հայկ: Անգեղը, դատելով Անգեղ-տուն տեղանունից, Տիգրիսի ակունքը համարվող շրջանի անվանագիրը աստվածն էր: Այսպիսով, և՛ Արածանի-Մեղրագետի, և՛ Եփրատի, և՛ Տիգրիսի ակունքները կապվել են միևնույն կերպարների ու պատկերացումների հետ (Հայկ-Անգեղ-Ուզուր/Ներգալ): Ներգալն առաջին հերթին մահվան աշխարհի մի աստված էր (նրա ուղղակի գործառույթյունը կարող է դիտվել որպես երկրորդային), և նույնը կարող էր բնորոշ լինել նաև նրա հայկական համապատասխանություններին: Հին հայոց արքաների երկու գերեզմանատները գտնվում էին Տիգրիսի և Եփրատի ակունքների շրջաններում՝ Անգեղ-տան Անգղ ավանում և Արամագղի պաշտամունքի կենտրոն Անի-Կամախ ամրոցում (Փավստոս Դ ի գ): Սա ցույց է տալիս նաև Անգեղ-Արամագղ որոշակի համապատասխանությունը, որը հաստատում է Հայկ-Անգեղ-Ներգալ-Ուզուր-Արամագղ համագրությունը: Արամագղը, ինչպես և այլ գերագույն աստվածներ, կապված էր և՛ երկնքի, և՛ երկրի, և՛ ստորերկրյալքի հետ, և իր նախորդ Ուզուր-Ներգալի (= Անգեղ, Հայկ) նման նաև անդրաշխարհի մի աստված էր: Որպես հանրահայտ մի գուգահեռ. նկատենք, որ հունական անդրաշխարհի աստված Հադեսը գերագույն աստված Զևսի մի հիպոտատսիսն էր<sup>100</sup>:

Բերված փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ Հայկի մի նախատիպը եղել է Հայաստանի էպոնիմ գերագույն աստվածը, որը հետագայում, իրանական գերիշխանության դարաշրջանում, վերակոչվել է իրանական մեծ աստծու անվամբ:

19. Հայկ դիցանվան նախատիպը ևս, թվում է, թե ի հայտ է գալիս արդեն հնագույն սեպագիր աղբյուրներում: Հին Միջագետքում Տիգրիսի և Եփրատի ակունքների հետ կապված կարելի է համարել շումերական անունով Enki աստծուն, որը հնագույն աքադերենում կոչվել է Haya (Խայա):

<sup>100</sup> Ասվածը հնարավորություն է տալիս ստուգաբանել Անգեղ դիցանունը: Արդեն ինքնազին այն մեկնաբանում է որպես «տգեղ» (ան + գեղ), որն ուսումնասիրողների կողմից հաճախ «ժողովրդական ստուգաբանություն» է համարվել: Հայ. գեղ- արմատը ծագում է հնդեվրոպական \*wel- «տեսնել» հիմքից, «տեսքոտ» > «գեղեցիկ» զարգացմամբ (հմտ. այս համատեքստում Արա Գեղեցիկ և Տորք Անգեղ հարաբերությունը), և այդ դիցանվան նախնական իմաստը պետք լինել «անտես», այսինքն՝ «տեսք չունեցող», «անտեսանելի»: Սա միանգամայն համապատասխանում է «այս» և «այն» աշխարհների փոխադարձ անտեսանելիության տարածված պատկերացմանը: Ուշագրավ է, որ հնդեվրոպական առասպելաբանության մեջ էլ անդրաշխարհի անվանումն էլ կողավորվում էր վերջինիս հետ համահունչ \*wel- արմատով (Г а м к р е л и д з е, И в а н о в. Նշվ. աշխ., էջ 824): Որպես լավագույն գուգահեռ. նշենք հուն. Հադեսի ստուգաբանությունը՝ \*η- + wid- «անտես» (այս ավանդական ստուգաբանությունը ևս, որոշ ժամանակ «ժողովրդական» համարվելուց հետո, հաստատվեց նոր ուսումնասիրությունների լույսի տակ տե՛ս V. I v a n o v. Old Novgorodian Nevide, Russian nevidal': Greek αιδηλος. UCLA Indo-European Studies. Los Angeles, 1999, p. 284:

Հետագայում նա նույնացվել է համահունչ անունով Eia, Ea աստծուն<sup>101</sup>։ Ինկի-Խայա-էան համարվել է ստորերկրյա (քաղցրահամ) ջրերի և իմաստուության աստված և պատկերվել է իր ուսերից սկզբնավորվող Տիգրիս և Եփրատ գետերով<sup>102</sup>։ Հայաստանյան ավանդույթում Տիգրիսի և Եփրատի սկզբնավորումը (ընդ որում, վերջինս իր երկու մեծ վտակների ակունքներով), ինչպես տեսանք, կապվել են Հայկի և նրա կրկնորդների հետ (Անգեղ, էլ-կունիրաս, հայոց թագավոր/ քահանա)։ Որոշ տվյալներ հիմք են տալիս կարծելու, որ իսուռաանատոլիական ավանդույթում էան նույնացվել է Maliya- աստծուն<sup>103</sup>։ Վերջինս նաև դետանուն է, որը, գոնե անվանաբանական մակարդակով, փաստորեն նույնական է Mala-Եփրատի և Մեդ-Մեդրագետի հետ (\*mel- «սև», հնդեվրոպական երկրորդային \*iyō-/\*iya ածանցով. որոշ այլ տեղանուններ ևս կարող են հանգես գալ այդ ածանցով և կամ առանց դրա)։ Hāya-ն աքաղական միարժեքորեն ընդունված ստուգաբանություն չունի, թեև համարվել է սեմական, կապված «ջուր» դադափարի հետ<sup>104</sup>։ Ինչևէ, տարբեր փաստարկների հիման վրա առաջարկվող Խայա-Հայկ համապատասխանությունն<sup>105</sup>, այսպիսով, հավելյալ հիմնավորում է ստանում։

Խայայի հետ նույնական Ha-a-a (= Haya, Haya, կամ Hayya) դիցանունը համարվում է Նիսաբա աստծու մի անունը («կապված կամ շփոթված Խայայի հետ»)։<sup>106</sup> Խեթական աղբյուրներում շումերական NISABA, խեթական Halki (խաթ. Kait) անուններով հայտնի է հացահատիկի աստվածույթունը, որի մականունն է Hayamma<sup>107</sup>։ Նիսաբայի հետ խուռիական ա-

<sup>101</sup> Այս աստծու վերաբերյալ տե՛ս օրինակ 1. M. D i a k o n o f f. Evidence on the Ethnic Division of the Hurrians.— “Studies on the Civilization and Culture of the Hurrians”. Winona Lake, Indiana, p. 83, n. 22: Մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբին Ea-ն և Haya-ն ներկայացվել են որպես առանձին աստվածներ (В. К. А ф а н а с ь е в а. От начала начал — „Антология шумерской поэзии“. СПб., 1997, с. 481):

<sup>102</sup> Տե՛ս օրինակ G. L e i c k. Նշվ. աշխ., նկար 43. Հմտ. և նկար 32:

<sup>103</sup> A. G o e t z e. The Theophorous Elements of the Anatolian Proper Names from Cappadocia.— “Language”. Vol. 29, 3, 1953, p. 267.

<sup>104</sup> Այս դիցանվան սեմական ստուգաբանության վերաբերյալ տե՛ս G. L e i c k. Նշվ. աշխ. էջ 37, И. М. Д а ь к о н о в. Архивические мифы Востока и Запада, с. 42. Ըստ վերջին հեղինակի, Hāya դետանունը «կենսատու ստորերկրյա ջրերի աստված» նշանակությունը, կապված է սեմ. \*hay-/\*haw- «կյանք» արմատին, որի հետ են առնչվում նաև hayy-at «կենդանի», «օձ» տերմինները (խեթագրվում է «ջուր-խոնավություն-օձ-մահ» իմաստաբանական փունջը):

<sup>105</sup> Ս. Գ. Ե ս ա յ ա ն. Նորից «վիշապ» քարակոթողների մասին.— «Բանբեր Երևանի Համալսարանի», 1985, №2, էջ 84 հտն.: Ա. Մ ր զ ս ի ս յ ա ն. Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա. Երևան 1992, էջ 40–41. Ն ու յ ն ի՝ Սրբազան լեռնաշխարհը. Երևան, 2000, էջ 36 հտն.: Ա. Փ ի լ ի ս յ ա ն. Հ. Ք ա մ ա լ յ ա ն. Շումերա-աքաղական տիեզերաստեղծ էնկի-Հայա աստծու և հայոց ազգածին Հայկ նահապետի համարություն փորձ.— «Հայ ժողովրդական մշակույթ» Հանրապետական IX գիտական նստաշրջանի գեկուցումների հիմնադրույթներ. Երևան, 1997: Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 24, 154: Նույնի՝ Արա Գեղեցիկ և Սուրբ Սարգիս, էջ 168–169:

<sup>106</sup> R.L.A. B. III, S. 1.

<sup>107</sup> Halki սկզբնապես նշանակել է «գարի» և հետո ընդհանրացել որպես «հացահատիկ»: Այս աստվածույթյան վերաբերյալ տե՛ս A. K a m m e n h u b e r. Die Hethitische Getreidegötter Halki/Nisaba.— In: “Near Eastern Studies” (Bulletin of the Middle Eastern Culture Center in Japan, 5), Wiesbaden, 1991 (նշված մականունը՝ էջ 144, ներգալի առնչությունը՝ էջ 152, 154): E. L a r o c h e. Նշվ. աշխ., էջ 73. Г. В и л ь х е л ь м. Указ. раб., с. 91–92. Հետաքրքիր է, որ գարուկորեկի և ցորենի հացի օգտագործումը Հովհան Օձնեցուն

վանդուլթում նույնացվել է ամպրոպի աստված Թեշուբի հայրը, «աստվածների հայր» կոչվող Կումարբին: Վերջինս Սիրիայում նույնացվել է հացահատիկի աստված Դագանի, շումերաքաղական էնլիլի և արևմտա-սեմական էլի հետ: Որպես Կումարբիի հայրենիքն է հիշվում Ուրկեշ քաղաքը (Հյուսիսային Սիրիա), որը մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջին ներգալի պաշտամունքի կենտրոնն էր: Էնլիլի, էլի և ներգալի հետ, ինչպես տեսանք, համադրելի է Հայկը: Ազգածին ավանդուլթյան մեջ և՛ Հայկը և՛ Արամը համադրելի են ամպրոպային Թեշուբ/Թեյշեբային. բայց և այնպես, վերջինիս ուղղակի կրկնորդն է Արամը, իսկ Հայկը, որպես նրա նախնի, կարող է դիտվել նրա հայրը (համտ. Կումարբի-Թեշուբ ծննդաբանությունը):

Վերևում շեշտվեցին Հայկի և նրա զուգորդների կապերը կրակի հետ, բայց դրանք, իհարկե, չեն սպառում այդ կերպարների ընդթափերը՝ նրանք ակնհայտորեն կապված են նաև ջրի հետ, որն ամպրոպի, կայծակի (ու անձրևի) աստվածների ամենահիմնական ատրիբուտներից է: «Հիմնական առասպելում» ամպրոպի աստծու՝ օձ-վիշապի դեմ տարած հաղթանակն է սկիզբ դնում ջրերին, իսկ Անատոլիայում ամպրոպի աստվածները գոնե որոշ դեպքերում, կապվել են առավելապես աղբյուրների ու ստորերկրյա ջրերի, քան անձրևի հետ<sup>108</sup> (համտ. Հայկի բանահյուսական հաջորդների լեգենդներում թոնրի կրակը դետի ակունքի վերածվելը):

Ամպրոպային անձրևաբեր աստվածները հովանավորում են նաև հացահատիկի բերքը: Այսպես, ուրարտական պատկերադրությունների մեջ ձեռքին հասկեր բռնած աստվածը կարող է նույնացվել Թեյշեբային<sup>109</sup>. սկանդինավյան ամպրոպի աստված Թոր-կայծակը Հարավային Շվեդիայում կոչվում էր «հացահատիկի ծերուկ»<sup>110</sup>. օսերը «հացի տոնին» աղոթում էին ամպրոպի աստծու բանահյուսական հետնորդ սուրբ Եղիային ու հաց խնդրում<sup>111</sup>: Նույնը վերաբերում է «թուխ մանուկներին» ու նրանց զուգահեռներին՝ հայոց «սուրբ թուխ մանուկը» հովանավորում էր կորեկի բերքը<sup>112</sup>, իսկ օսական «ձիավոր սև սրբից» օգնություն էին խնդրում ձեռքին հատուկ թխված բլիթ բռնած<sup>113</sup>:

Հացահատիկի և հացաթխման կասյն ակնհայտ է: Հայոց հավատալիքների համաձայն, ընտանիքի նախնիներն ապրում էին թոնրի շուրթին կամ թոնրի ակում<sup>114</sup>, իսկ հայոց բոլոր ընտանիքների նախնին և առաջին նա-

առնչվող մի լեգենդում, որը կարող է համարվել հացթուխի բերված լեգենդի մի ուշ տարբերակը, հանդես է դալիս հայերին և դրանց հակադրվող հույներին տարբերակող հատկանիշ, տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 303-304: Բ ա ջ բ ր ու ն ի. Ճ ա ն ապրհորդական ուղևորություններ. Երևան, 2003, էջ 175:

<sup>108</sup> G. L e i c k. Նշվ. աշխ., էջ 164. J. G. M a c q u e e n. Nerik and Its "Weather-God". – "Anatolian Studies", 1980. V. H a a s. Նշվ. աշխ., էջ 594 հտն.:

<sup>109</sup> Ա. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան 1990, էջ 112 և աղ. 25:

<sup>110</sup> G. D u m é z i l. Gods of the Ancient Northmen. Berkeley, Los Angeles, London 1973, p. 72.

<sup>111</sup> Ж. Д ю м е з и л ь. Скифы и нарты, с. 55

<sup>112</sup> Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 199:

<sup>113</sup> Ա. Պ Ե տ ր ո ս յ ա ն. «Թուխ մանուկ». Հնագույն ակունքները, էջ 57:

<sup>114</sup> Մ. Ա բ Ե ղ յ ա ն. Երկեր. Հ. Ա., էջ 15, 59:

հասկանալի էր Հայկը: Հայկի բանահյուսական հաջորդների (Բելին թոնրում այրող հայոց արքա, հացթուխ կնոջ ամուսին), ապա և պատանի նվիրագործյալների թոնրի և հացաթխման հետ քննարկված կապերն էլ թերևս - խոսում են այս աստծու և Հայկի նույնացման օգտին:  $\text{𐎶𐎠𐎺𐎠}$ -ը առաջին վանկի երկար a-ն էլ համահունչ է Հայկի անվան համար վերևում առաջարկված ստուգաբանության \*Ha- արմատից:

20. Ելնելով ասվածից, Հայաստանի անվանումները կարելի է մեկնաբանել որպես «այրվող/այրված» «մութ, սևացած» (հրաբխային) երկիր, որն անձնավորվել է պատանի նվիրագործյալների՝ այրվող/այրված/թուխ մանուկների Mannerbund-ի ազգագրական և նրանց երկնային առաջնորդ ամպրոպի աստծու առասպելաբանական կերպարներով: Այս համատեքստում կարող են մեկնաբանվել Հայաստանի և հարակից շրջանների մի շարք հնագույն ցեղատեղանուններ:

Միջագետքի Հյուսիսում և Միջինում արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակից հիշվում են Ar(a)m- և \*rēmo- / \* romo- / \* rHmo- հիմքի հետ համադրելի այլ անվանումներ. հմմտ. օրինակ, Arame, Aramu, Arami, Arima, Aruma, Arman (չումերական և աքազական դարաշրջանների տեղանուններ Հյուսիսային Միջագետք-Հարավային Հայաստանում). Armanum, Armi, Arimu-Arimu, Armalu (տեղանուններ էբլայի տեքստերից)<sup>115</sup>: Սրանք միանգամայն համահունչ են հին սեմական ժողովուրդների պատկերացումներին մեծ աստծու բնակավայր «մթուժյան/գիշերվա» երկրի ու լեռների մասին, տեղայնացած Հայաստանում, և պետք է համադրվեն Հայաստանի էպոնիմ «սև, մուգ» Արամ նահապետի (հնում՝ աստծու) հնդեվրոպական անվան հետ: Այս անվանումների մի նշանակալի մասը դալիս է Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հարավային որոշ շրջաններ ընդգրկող Շուբուր/Աուբարտու երկրից (հիշվում է բազմաթիվ ձևերով՝ շումեր. SU.BUR, SU.BUR, SU.BIR, SU, աքադ. Subartu, Subartum, ասուր. Subari և այլն): Հատկանշական է, որ այս երկու ձևերն էլ պահպանվել էին մինչև ուրարտական ժամանակները. Սասունի և Մուշի շրջանների որոշ հատվածներ ընդգրկող ուրարտ. Arme (Հյուսիսարևելյան մասը՝ Urme) համապատասխանում է ասուր. Subria-ին<sup>116</sup>: Subur անձնանունը ամենահավանաբար հանդիպողներից է հին շումերական ավանգույթում<sup>117</sup>, որը կարող է

<sup>115</sup> S b u J. F i n k e l s t e i n. Subartu and Subarians in Old Babylonian Sources.— “Journal of Cuneiform Studies”, V. 9, 1. 1955, p. 2. Répertoire géographique des textes cuneiformes. Wiesbaden 1977-1993. B. I, S. 18. B. II, S. 15. B. III, S. 21. B. V, S. 38. B. XII, S. 50-54, հմմտ. և Արամիս/շ(?) աստծու անունը, մի ասորեստանյան տեքստում հիշված որպես «աստվածների արքա»՝ E. S c h r a d e r. Die Keilinschriften und das Alte Testament. B. 3, Berlin, 1903, S. 478: Այս անվանումներն ակնհայտորեն շարունակվում են Հայաստանի հարավի ավելի ուշ ավանդված ուրարտական անվանաբանության մեջ (հմմտ. Արամու արքայանունը, Արամայի, Արմե տեղանունները և այլն), տե՛ս Ա. Պ ե տր ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 121, 131-133, 158-169:

<sup>116</sup> Շուբուր երկրի անվանումների վերաբերյալ տե՛ս օրինակ I. J. G e l b. Hurrians and Subarians. Chicago, 1944, p. 23 ff., 84 ff. M. A. X a ч и к я н. Նշվ. աշխ., էջ 6:

<sup>117</sup> I. J. G e l b. Նշվ. աշխ., էջ 31-32:

այս մակարդակում ևս վավերացնել Հայկական լեռնաշխարհի հարավի և Հարավային Միջագետքի հնագիտորեն ի հայտ եկող շփումների փաստը<sup>118</sup>:

21. Հնագույն միջագետքյան տեքստերում Շուբուր/Շուբարի երկրանունը հաճախ հանդես է գալիս HA.A, ավելի հազվադեպ՝ տարբերակային A.HA ձևերով<sup>117</sup>: Սրանցից առաջինը Ա. Մովսիսյանի կողմից արդեն համարվել է հայ ցեղանվան հետ<sup>120</sup>: Էնկիի պաշտամունքի կենտրոնն էր Էրիդու քաղաքը Հարավային Միջագետքում: Շումերական առաջին հետջրհեղեղյան դինաստիան, ասվում է, որ իշխել է Էրիդուում, կամ, ըստ տեքստի մի այլ տարբերակի՝ HA.A-ում: Վերջինս, Էրիդուի առնչությամբ, քաղաքական թարգմանություններում հանդես է գալիս Subari և նման ձևերով, և կարելի է կարծել, որ առաջին դինաստիայի HA.A-Subari քաղաքը կոչվել է չուբարացիների անունով<sup>121</sup>: Այս կապերի համատեքստում կարող են լուսաբանվել Էնկի աստծու հայա անունը, ջրհեղեղի առասպելի որոշ մանրամասներ և այլն:

Շուբուր/Սուբարտու երկրի պահպանված անվանաբանության հիման վրա, դրա բնակիչների լեզուն չի կարող միարժեքորեն, կամ դոնե հիմնականում հնդեվրոպական համարվել<sup>122</sup>: Բայց և այնպես, պետք է կարծել, որ այդ երկրի բնակիչների մեջ արդեն առնվազն մ.թ.ա. երրորդ հազարամյակից, եղել է նաև հնդեվրոպական տարրը: Այս առնչությամբ հիշարժան է, որ ըստ Թ.Վ. Գամկրելիձեի և Վ.Վ. Իվանովի, հնագույն հնդեվրոպացիների «նախահայրենիքը» հնարավոր է նույնացնել մ.թ.ա. V-IV հազարամյակների՝ Հյուսիսմիջագետքյան իսլաֆյան հնագիտական մշակույթի կրողների տարածման արեալի հետ<sup>123</sup>, որը ներառել է Շուբուր-Սուբարտուն:

Այս լույսի ներքո կարելի է դիտել արդեն վաղուց հայ ցեղանվան հնագույն ակունքների առթիվ Վ.Վ. Իվանովի կողմից բերված փաստերը: Օրինակ, մի հինասորեստանյան (մ.թ.ա. երրորդ և երկրորդ հազարամյակների սահմանադիմ) արձանագրության մեջ հիշվում է DUMU Ha-a-a «Հա(յ)այի որդի» արտահայտությունը, որը հեղինակի կողմից մեկնաբանվում է որպես «Հայա (բնակավայրի) բնակիչ» (բայց հմտ. և վերևում քննված համահունչ դիցանունը). էբլայական մի տեքստում (մ.թ.ա. երրորդ հազարամյակի կես) հանդիպող ha-a hu-ti-mu կապակցությունը մեկնաբանվում է որպես «խուտիմցի Հայա», ընդ որում գուգահեռ տեքստերում հիշվում են հնագույն Հայաստանի մյուս կարևոր անվանաբանական տարրերի հետ համադրելի Armi և Azi (հմտ. Ar/a/m- և Azzi՝ Հայասայի մյուս անվանու-

<sup>118</sup> Հետաքրքիր է, որ Ninsubura (չումեր. «տեր/տիրուհի Շուբուր») աստվածությունը հիշվում է որպես ներգալի կին՝ RLA. B. IX S. 220, տե՛ս և A. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 188:

<sup>119</sup> I. J. G e l b. Նշվ. աշխ., էջ 31-32, 94-98. Հետաքրքիր է, որ որոշ աղբյուրներում HA.A և A.HA տեղանունները նույնացվում են Ku'ara-ի հետ, որը հիշեցնում է շումերական KUR «խո-անդրաշխարհը» և ուրարտ. Kuera դիցանունը (Repertoire géographique des textes cuneiformes. B. I. S. 84, և B. III, S. 95-96. RLA. B. III, S. 1): Ընդ որում, որոշ տվյալներ թույլ են տալիս կարծելու, որ առասպելական անդրշիրմյան KUR-ի երկրային տեղայնացումներից դոնե մեկը եղել է Հայկական լեռնաշխարհի հարավը:

<sup>120</sup> Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն. Սրբազան լեռնաշխարհը, էջ 37, 47:

<sup>121</sup> I. J. G e l b. Նշվ. աշխ., էջ 31, 94-95:

<sup>122</sup> Մի շարք չուբարեական անուններ տե՛ս I. J. G e l b. Նշվ. աշխ., էջ 100-108:

<sup>123</sup> T. B. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 891, հտ. 964:

մը)<sup>124</sup>: Հեղինակը հատուկ նշում է, որ այս անվանումները թեև կարող են կապվել Հայոց ցեղանունների հնագույն նախատիպերի հետ, բայց դրանից չի բխում, որ անունների կրողներն արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից Հայերի չեզոքական նախնիներն էին ցեղանունները կարող են բազմակիորեն անցնել մի էթնոսից մյուսին: Այս հարցում միակ էական փաստարկը հիշյալ ցեղանունների բնիկ Հայկական ստուգաբանությունների հավաստումն է, որն այս աշխատության նպատակներից մեկն է:

Մյուս կարևոր ցեղատեղանունն է խեթ. աղբյուրների Hayaša, այլ անունով՝ AZZI երկիրը (ամեն դեպքում, այս տեղանունները որոշակիորեն համարժեք են): Առաջին ձևն, ինչպես տեսանք, վաղուց ի վեր կապվել է Հայ ցեղանվան հետ, իսկ երկրորդը մոտեցվում է Հայ. Ազորդ և Ազորդաց փոքր տեղանուններին<sup>125</sup> (թեև խեթ. -ZZ-ն Հայերենում կհամապատասխանեցին, բայց արմատական մակարդակով այս ստուգաբանական կապը հնարավոր է): Ակնհայտ է սրանց համադրելիությունը Հայ. ազազեմ «չորացնել» բառին, որը ծագեցվում է այն նույն հնդեվրոպական \*Has- «այրել» արմատից (կարծում են՝ \*-ջ'ի- ածականով), որին վերևում հանգեցվեցին Հայկ և Հայ ձևերը: Ըստ այդմ, Hayaša և AZZI ցեղատեղանունները, որպես մեկ երկրի, կամ հարևան երկրամասերի կոչումներ, կարող են հանդել, ի վերջո, միևնույն արմատին (հնարավոր է, տարբեր հնդեվրոպական լեզուներով):

22. Մեծ Հայքի կենտրոնական նահանգն էր Այրարատը, նրա միջնաբերդը, քաղաքական ու մշակութային կենտրոնը: Ըստ այդմ, Այրարատը Հայաստանի ամենակարևոր տեղանուններից մեկն է, ինչ-որ չափով Հայաստանի համարժեքը: Այրարատի, որը կոչվել է նաև «դաշտն Արայի» (խորենացի Ա.Ժե), էպոնիմն է Արամի որդի Արա Գեղեցիկը: Նա զոհվում է Շամիրամի դեմ կռվում և պիտի վերակենդանանար արալեգներին՝ շնից սերված առասպելական կենդանիների կողմից լիզվելով: Արայի հնագույն նախատիպն է համարվում Պլատոնի մի աշխատության մեջ հիշված էրը, Արմենիոսի որդին: Վերջինս զոհվում է կռվում, բայց տասներկու օր անց դիակիրիման խարույկի վրա վերակենդանանում ու պատմում, թե ինչ է տեսել անդրաշխարհում (Պետություն, 614b հտն.)<sup>126</sup>: Այս էրը, մյուս կող-

<sup>124</sup> В. В. Иванов. Выделение разных хронологических слоев..., с. 30 — 33.

<sup>125</sup> В. Н. Хачатрян. *Նշվ. աշխ.*, էջ 138, Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայաստանի լեզվի հինանատոլիական ծագման վարկածը.— ՊԲՀ, 1976, №1, էջ 103, Գ. Բ. Ա ժ ա յ - կ յ ա ն. О соотношении хайасского и армянского языков.— ИФЖ, 1988, № 1, с. 69:

<sup>126</sup> Նկատենք, որ Հայոց մեռնող և հառնող կերպարների առասպելությունները կարող են համադրվել հանգուցյալի հետ կատարվող հիմնական ծեսերին (կենդանիների հոշոտում, դիակիրում, դիվաղում), որոնք կոչված էին ապահովելու նրա հետագա վերածնունդը: Արայի շների կողմից լիզվելով վերակենդանանալը հիշեցնում է զրադաշտական ծեսը (հանգուցյալի դին շների և թռչունների կողմից հոշոտվելը), և հատկանշական է, որ էրն էլ նույնացվել է Զրադաշտի հետ (տե՛ս Ա. Մ ա տ ի կ յ ա ն. Արա Գեղեցիկ. Վիեննա 1930, էջ 258-274, աղբյուրների հղմամբ): Ինչևէ, այս ծեսի ծագումը նախազրադաշտական է, ընդ որում, նշված երեք ծեսերն էլ Հայաստանում վկայված են արդեն նախաուրարտական ժամանակներից, և այս նույնացումն, այսպիսով, պետք է որ երկրորդային ծագում ունենա (Արա Գեղեցիկի առասպելի վերաբերյալ այս համատեքստում տե՛ս Հ. Մ ա ր տ ի - ր ո ս յ ա ն, Ռ. Թ ո ր ո ս յ ա ն. Արգիշթիսիսիսի սարկոֆագը.— ՊԲՀ, 1986, № 3, էջ 226-227): Ավելացնենք, որ այս ծեսերը կարող էին համադրվել հասարակության էթնիկական, դասային և սեռատարիքային բաժանմանը: Մահվան երեք ծեսերի իմաստաբանական

մից, և՛ անուշուկ, և՛ կերպարով համարյա նույնական է այրված երկիրն անձնավորող միջազետքյան աստված էրրային<sup>127</sup>, որը Ներգալի մի այլ անվանումն է, կամ նրան նույնական կրկնակը<sup>128</sup>: էրի դիակիզման խարույկն ու էրրայի այրված հողը մատնանշում են, որ Այրարատ անունը կարելի է մեկնաբանել հեղուկառ բառի նմանությամբ (հեղ-հեղ-առ, հեղեմ արմատի կրկնությամբ և -առ վերջածանցով, հմմտ), մոտավորապես «այրված (մոխրացած, սևացած) երկիր» իմաստով: Հատկանշական է, որ Այրարատը ուրարտական տեքստերում կոչվել է Etiu-ni/hi, որը կարելի է հանգեցնել \*Hā- արմատի մի ածանցյալի (\*Hatiyo-)<sup>129</sup>: Ավելին, Մեծ Մասիսի Ագատ Մասիս, ապա և Արարատյան դաշտով հոսող Ագատ գետի անվանումները նույնպես կարող էին սկզբնապես կասկած լինել հայ. ազ- արմատին, և միայն հետագայում վերաիմաստավորվել ագատ (< իրան.) տերմինի ազդեցությամբ<sup>130</sup>: Այս մեկնաբանության օգտին է խոսում նաև Մասիսի արդեն հիշյալ Աև սար կոչումը:

Հայաստանի հարավային հարևանների համար Հայկական լեռնաշխարհը հարավից եզերող լեռներն, ինչպես տեսանք, հանգես էին գալիս որպես ջրհեղեղի, մարգածնության, անգրաշխարհի մուտքի լեռներ, կոչված Մաշո/Մասիուս, Արարատ, «Մթության լեռներ»: Այս անվանումները հետագայում կիրառվում են Այրարատի լեռան Մասիս, Արարատ, Աև սար/Մութ աշխարհ անուններում: Մասիսի համազրությունը բիբլիական Արարատի հետ անհնարին է դիտել Այրարատ-Արարատ նմանությունից առանձին: Իսկ չի՞ կարելի ստուգաբանական կապ տեսնել այդ երկուսի միջև: Ըստ ազգածին ավանդության, հայերի առաջին հանգրվանն էր Կորդվաց Արարատը, որտեղից էլ նրանք շարժվել են հյուսիս՝ Հարթ, ապա Այրարատ: Եվ եթե Մասիս-Աև սար ձևերը դալիս են հարավից, ապա Այրարատն էլ կարող էր անցնել նույն ճանապարհը<sup>131</sup>:

հակադրության վերաբերյալ հայկականին ամենամոտ՝ հունական և հնդիրանական ավանդություններում տե՛ս G. N a g y. Նշվ. աշխ., էջ 174-180:

<sup>127</sup> J. J. R o b e r t s. Erra - Scorched Earth.— "Journal of Cuneiform Studies", N 24 (1971).

<sup>128</sup> RLA. B. IX, S. 217-218. Այսպես, Ներգալը դնում է անգրաշխարհ և վերագառնում որպես էրրա, տե՛ս Ancient Near Eastern Texts..., 507-512. В. К. А ф а н а с е в а, И. М. Д ъ я к о н о в. Я открою тебе откровенное слово. М., 1981, с. 79-91:

<sup>129</sup> Էթիունիի, որպես հայոց հին կենտրոնի վերաբերյալ տե՛ս А. П е т р о с я н. Самоназвание армян и вопрос локализации носителей протоармянского языка.— "Вестник общественных наук" 1991, № 5; А. П е т р о с я н. Армянский эпос и мифология, с. 188-190:

<sup>130</sup> Մ. Արեղյանը հիշում է Ագատ գետի այլուրեք անհայտ Ազա անվանաձևը (Երկեր, հ. Ա, էջ 152, հ. Ը, էջ 193): Հետաքրքիր է, որ ուրարտական տեքստերում Արարատյան դաշտի ամենակարևոր շրջանը՝ Արագածոտնը իր մերձակայքով, կոչվում է 'As/za, այսինքն՝ Waca կամ Waza, որը համազրելի է նաև Արագածի -գած տարրի (< \*waca) և կամ այդտեղ գտնվող Վժան, ներկայումս Ուջան, գյուղի անվանը: Այրարատի ստուգաբանության վերաբերյալ տե՛ս և Ա. Պ ե տր ո սյ ա ն. Արա Գեղեցիկ և սուրբ Աարգիս, էջ 166: А. П е т р о с я н. Армянский эпос и мифология, с. 91: Կարելի է կարծել, որ Արա-Այրարատ, ինչպես և Հայկ-հայ անունների հարաբերությունը երկու տարբեր արմատների բաղադրության արդյունք է. ընդ որում, երկու դեպքում էլ էական է կապն «այրվելու» հետ:

<sup>131</sup> Արարատ տեղանունը, որո մեզ է հասել Աստվածաշնչից՝ երբ. 'Araṙāt (մասորիտյան ձայնավորմամբ), կումրան. 'WRRT, արամ. 'RRT, սովորաբար կասվում են ասուր. <sup>naa</sup>Urartu-ին, որի նախնական ձևերն են համարվում <sup>ma1</sup>Uratri/u-ն (մ.թ.ա. XIII դ.) և

23. Նման մեկնաբանություն կարող են ստանալ նաև Հայաստանի հարևան երկրների որոշ ցեղանուններ.

ա) Հայոց Արամ նահապետի անունը նույնական է Աստվածաշնչում արամեացիների էպոնիմի անվանը: Արամեացիների նախնիները՝ արամեացի-մական ախլամու և մի քանի այլ ցեղեր մ.թ.ա. XIV դ. կեսից հետո տեղափոխվում են Կադմուսի շրջանը. նրանք սկսում են կոչվել «արամեացի» մ.թ.ա. XII դ. վերջից, տեղի Ar(a)m- հնագույն անվանաբանական հիմքով (սկզբնապես երկու անունով՝ օրինակ Ahlamī<sup>KUR</sup> Armaya<sup>MES</sup>)<sup>132</sup>: Զևսի և Տիփոնի կովի վայրը՝ Արիմքը հին և նոր հեղինակները համազրուցում են արամեացիների ցեղանվանը, այսինքն՝ այդ կովը կարող է դիտվել որպես արամեացիների ազգաձևության առասպել: Հատկանշական է, որ Արիմքը, որը տեղայնացվում է մի քանի տեղ, նկարագրվում է որպես կայծակնահարված և այրված-սևացած երկիր (Իլիական II, 780-785, հմմտ. Ստրաբոն 12.5.11)<sup>133</sup>:

բ) Արդեն XIX դ. վերջին նկատված է Հայ և խեթական hattī (= hat'i) ցեղանունների ստուգաբանական համադրելիությունը (Պ. Ենսեն). ըստ այդմ, Հայ ձևը կարող էր ծագել խեթական ցեղանվան \*hat'iyō- ենթադրյալ ածանցյալից, հայերենին բնորոշ զարգացմամբ: Այս տեսակետի եռանդուն պաշտպանն էր Ի. Դյակոնովը, որը գտնում էր, որ հայերն այդ ցեղանունը ձեռք են բերել խեթական պետության անկումից հետո, մ.թ.ա. XII դ.: Այս ստուգաբանությունը հակասում է Հայ ցեղանվան և Հայաստ ու HA.A ցեղատեղանունների կասկին, քանի որ վերջիններս ուղղակիորեն համադրելի են ժամանակակից Հայ ձևին, բայց ավանդված են խեթական պետության կործանումից ավելի վաղ: Այդ իսկ պատճառով այն մերժվում է Հայաստանի վարկածի կողմնակիցների կողմից: Բայց ստուգաբանորեն համադրելի և իրար հարևան երկու հին ցեղատեղանունների նույնական ծագումը (ինչպես Հայ-արմենների ու արամեացիների դեպքում), դոնե տեսականորեն, չի կարելի բացառել:

<sup>132</sup> Uratri-ն (մ.թ.ա. X դ.), տեղայնացված Հարավային Արարատի՝ Նիբուր-Ջուզի լեռան շրջանում և Հարակից տարածքներում (Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 17): Ըստ մի կարծիքի՝ Uratri-ն ստուգաբանվում է որպես անատոլիական Ur-watri «մեծաջուր» (հղվում է ըստ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ուրարտիները և հայերենը: Բ. Ա ո ա ք ե լ յ ա ն, Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Գ. Ս ա ռ ք ս յ ա ն. Ուրարտու-Հայաստան. Երևան, 1988, էջ 163: Անատոլիական ներկայությունն այստեղ երևում է նույն ժամանակաշրջանի Targhuzziza տեղանունից): «Մեծ ջուրը» համահունչ է նաև միևնույն տարածքների ասուր. Nair անվան աքադ. nag «գետ» արմատով մեկնաբանությունը (Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. Тбилиси, 1954, с. 18. այս անունները բացատրվում են Միջագետքը սնուցող մեծ գետերի Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնելու հանգամանքով): Բայց մյուս կողմից, Ur(u)atri/u-ի երկրորդ բաղադրիչը կարելի է կապել Հայ. «այրեմ» արմատի մի ազգակից ձևի՝ \*Hatēr-ից, հմմտ. ավեստ. atar «կրակ», լատ. ater «մութ, սև» (այսինքն՝ «այրված»), ուկր. ватра «կրակ, վառարան», լեհ. watra «հարդի մոխիր»: Այսպիսով, Ուրարտու և Արարատ տեղանունները նույնպես կարող են առնչվել «այրվելու» գաղափարին:

<sup>133</sup> RLA. B. I, S. 131 ff. տե՛ս և Г. М. А в е т и с я н. Северная Месопотамия и юго-западные области Армянского Нагорья. Ереван, 1997, с. 6-10:

<sup>133</sup> Այս մասին մանրամասն տես Ա. Պ ե տ ը ո ս յ ա ն. Արամի առասպելը..., էջ 158 հտն., А. П е т р о с я н. Армянский эпос и мифология, с. 175 – 178:

Խեթերի Hatti անվանումը դալիս է Խաթուսաս մայրաքաղաքի շրջանի նախահնդեվրոպական բնակիչներից՝ Խաթերից, որոնք արդեն թերևս մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից ձուլվեցին Խեթերի մեջ, իրենց անվանումը թողնելով նրանց: Խաթերի լեզվից մնացել են մի շարք աեքսաեր և անուններ: Հնդեվրոպական աղղեցությունը Խաթական առասպելաբանության և անվանաբանության վրա դեռևս բավարար չափով բացահայտված չէ, բայց քննությունը հավաստում է, որ Խաթական ամպրոպային առասպելի հիմնական միջուկը պետք է որ հնդեվրոպական լինե՞ր<sup>134</sup>:

Hatti ցեղատեղանվան ծագումը կարելի է պատկերացնել \*Hā- «այր(վ)ել» արմատի \*-t- տարրով ածանցյալ ձևերից (մայրաքաղաքի Խաթական անունն է Hattus = Խաթոս): Հին Խեթական դիցարանում էական էր «Խաթի ամպրոպի աստծու» դերը: Նա «Խաթի երկրի տերն» էր, ուզմի աստված, որը ներկայացնում էր ժողովուրդը այլ երկրների հետ հարաբերություններում<sup>135</sup>: Նրան է դիմում Մուրսիլի II արքան ժանտախտի ժամանակ: Այս կերպարը նույնականության աստիճանի համապատասխանում է հայոց Հայկին, որը նույնացվել է ժանտախտ առաքող Ներդալին [սա նաև Խուրաթի հատկանիշն է]:

Հայ ցեղանունը ևս, ինչպես տեսանք, կարող է հանդեցվել \*Ha- արմատի \*-t-ով ածանց պարունակող նախաձևերի (հնարավոր է, բայց ոչ պարտադիր, \*-iyo- երկրորդ ածանցով): Այսպիսով, հնարավոր է, որ Հայաստանի այս հնագույն հարևանների անվանումը հնդեվրոպական փոխառութ-

<sup>134</sup> Վերլուծությունը ցույց է տալիս, որ Խաթական ամպրոպի աստծու ձևեր՝ Purull-ն հնդեվրոպական (թրակյան) փոխառություն է, և, որ շատ էական է, ծագում է \*paHh₂w- «կրակ» արմատից՝ Հմմտ. հուն. πυρ-, հայ. հուր (В. Н. Т о п о р о в. Хеттск. Purulia, лат. Parilia, Palilia и их балканские истоки. — „Балканский лингвистический сборник“. М., 1976. Այս ձևի տեքստը հնդեվրոպական ամպրոպային առասպելի կարևոր աղբյուրներից է՝ В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Исследования в области славянских древностей, с. 118, 134 сл. В. L i n c o l n. Նշվ. աշխ., էջ 117 ff.): Ամպրոպի աստծու անունը՝ Tagu, համադրելի է այդ աստծու հնդեվրոպական անվանումներից մեկին՝ Հմմտ. Խեթալուվ. Tarhu-, ոչ անատոլիական արտացոլմամբ (այս հնդեվրոպական դիցանվան վերաբերյալ տե՛ս С. А. Н и к о л а е в, А. Б. С т р а х о в. Указ. раб., с. 150 сл.): Նրա հոր անունը՝ Šuli(n)katte նշանակում է «Սուլի(ի)-արքա»: Suli(n)katte-ն նույնացվել է Ուզուր-Ներդալի հետ, և, ինչպես վերջինս, ներկայացվել թուրքաշունի տեքստով (ակադ. namsaru), Հմմտ. հնդեվրոպական \*k'u-l- «սուր», հնդ. cūla «տեղ», հայ. սուր «թուր» (անատոլիական «թուր-աստծու» և Ներդալի վերաբերյալ այս առթիվ տե՛ս RLA. В. IX, S. 224-225: E. L a r o c h e. Recherches sur les noms des dieux hittites. Paris, 1947, p. 105. О. Р. Г е р н и. Хетты. М. 1987, с. 177, 180): Բացահայտ հնդեվրոպական տեքստերի ամպրոպի աստծու դասեր անունը՝ Inara, Հմմտ. հուն. Νηρείς, սաբին. Nerio, իլիր. Noreia դիցուհիների անունները (\*Hner-), որոնք, ի միջի այլոց, քննարկվել են ամպրոպի աստծու և նրա կնոջ առասպելի շրջանակներում (տե՛ս В. Н. Т о п о р о в. К древнебалканским связям в области языка и мифологии. — „Балканский лингвистический сборник“. М. 1976, с. 44 сл. В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Исследования в области славянских древностей, с. 51-52, 123. В. L i n c o l n. Priests, Warriors, and Cattle, p. 120): Այսպիսով, Խաթական ամպրոպի աստծու, նրա հոր ու դասեր, ապա և ձևի անվանումները հնդեվրոպական են՝ տե՛ս А. П е т р о с я н. Армянский эпос и мифология, с. 9, 11, 34-35, 156, 191: Խաթերենում հնդեվրոպական (ոչ անատոլիական) փոխառությունների վերաբերյալ տե՛ս Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 882:

<sup>135</sup> О. Р. Г е р н и. Նշվ. աշխ., էջ 126.

յուն է, ստուգաբանորեն ազգակից, կամ նույնիսկ նույնական հայ ցեղանվանը: Հատկապես ամպրոպային առասպելի տերմինների և դրանց հետ առնչվող ցեղանվան փոխառությունը պետք է բացատրվի այն իրողութամբ, որ հնդեվրոպացիներն ամենուրեք հանգես են եկել որպես նվաճված երկրների վերնախավ առաջնորդ և նրա ջոկատը, որոնք համարվել են երկրային համապատասխանություններն ամպրոպի և/կամ Mannerbund-ի աստծու և նրա գործի: Մարտական ջոկատի անգամների անվանումը վերաճելով ցեղանվան, կարող էր տարածվել ողջ ենթակա բնակչութայն վրա<sup>136</sup> (բազմաթիվ ցեղանուններ՝ օրինակ ռուս, ֆրանսիացի, բուլղար և այլն, նույնպես ծագում են այլազգի տիրողների անվանումներից):

զ) Հաշվի առնելով ասվածը Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հնագույն կապերի վերաբերյալ, հնարավոր է թվում Հայաստանի և Հայերի քննարկված անվանումները համագրել նաև շումերների SAG-GIG.GA «սևագլուխ» ցեղանվան հետ: Ցեղանունները լայնորեն փոխառվում են, բայց այս դեպքը բացառիկ է. «սևագլուխ» անվանումն անցել էր աքադացիներին և ասորեստանցիներին, բայց թարգմանաբար salmat qaqqadi: Եվ թեև գուցե լայն ցեղատեղանունները լայնորեն տարածված են ամենուրեք, բայց այս դեպքում ևս, հավանաբար, էական է եղել վերևում քննված տիպի ծիսաառասպելաբանական գործոնների գերը: Հայկական լեռնաշխարհի, Անատոլիայի և Միջագետքի հնագույն ցեղատեղանունների այս համապատասխանությունը կարող է արտացոլել այդ տարածքների հնագույն մշակութային շփումները, նրանց միասնական քաղաքակրթիչ կենտրոններից ծագած լինելը և համանման ծիսաառասպելաբանական ավանդույթները<sup>137</sup>:

## ВОПРОСЫ ЭТНОГЕНЕЗА АРМЯН В СВЕТЕ ТРАДИЦИОННЫХ ДАННЫХ

АРМЕН ПЕТРОСЯН

### Р е з ю м е

В этногонических легендах два эпонима Армении Гайк (Наук) и Арам (Агам) выступают как лидеры взрослых воинов и молодых охотников соответственно. Войско Арама восходит к индоевропейскому учреждению Mannerbund, обществу неженатых молодых охотников и воинов. Члены древнейшего армянского Mannerbund-a назывались t'ux mapuk "темный (< запеченный/обожженный) молодец". Некоторые легенды подчеркивают связь армянских этногонических патриархов с огнем. В этом контексте имя Наук может рассматриваться в отношении с индоевропейским \*На- "гореть" (впоследствии это имя было контамини-

<sup>136</sup> Այս տիպի ցեղանունների վերաբերյալ տե՛ս օրինակ K. K e r s h a w. Նշվ. աշխ., էջ 133-134:

<sup>137</sup> Տե՛ս և Ա. Պ Ե տ Ր Ո Ս Յ Ա Ն. Արամի առասպելը..., էջ 119:

ровано с \*roti- "господин"). Имя Арам (ср. индоевр. \*r̥emo- "темный, черный") может быть объяснено как "обожженный". Эти интерпретации сопоставляются с некоторыми древними названиями Армянского нагорья и сопредельных областей (шумер. HA.A, хетт. Hayasa, сем. "Гора темноты" и т.д.).

## PROBLEMS OF ARMENIAN ETHNOGENESIS IN THE LIGHT OF TRADITIONAL DATA

ARMEN PETROSYAN

### S u m m a r y

In the ethnogenic legends the two eponyms of Armenia Hayk and Aram figure as the leaders of adult men and hunting youths respectively. The troop of Aram represents the early Indo-European institution of *Männerbund*, the hunter-warrior society of unmarried young men. The members of the earliest Armenian *Männerbund* would have been called *t'ux manuk* 'dark (< baked/burnt) youth'. Some legends stress the association of the Armenian ethnogenic patriarchs with the fire. In this context the name Hayk may be considered in connection with Indo-European \*Ha- 'burn', which was confounded with \*roti- 'lord' later. The name of Aram (cf. Indo-European \*r̥emo- 'dark, black') may be explained as 'burnt'. These interpretations are juxtaposed with some ancient names of the Armenian Highland and surroundings (Sumerian HA.A, Hittite Hayasa, Semitic "Mountain of darkness", etc.).